Ապառաժ

Հիմնադրված է 1991 թվականին: 14 (514) սեպտեմբեր 1-17, 2022թ.

ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀՅ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

Հայրենիքը սակարկության առարկա չէ

Սեպտեմբերի 2-ը՝ Արցախի Հանրապետության օրը, Ստեփանակերտում եւ Երեւանում հիշատակվեց ժողովրդական միջոցառումներով:

Արցախի պետականության կայացման մեջ Արցախի Հանրապետության հռչակման օրը իր առանձնահատուկ անկյունադարձային դերն է ունեցել:

31 տարի առաջ Արցախի ժողովուրդը կամք ունեցավ որոշում կայացնելու՝ անկախ պետականություն հռչակելով, որն անհրաժեշտություն էր գոյատեւման եւ մայր հայրենիքում զարգացում ապահովելու համար: Ավելի քան 30 տարիների ընթացքում Արցախի պետական համակարգը, իր բոլոր վայրիվերումներով հանդերձ, կայացած իրողություն է: Արցախի բանակը, պետական համակարգում առկա ինստիտուտները, ընտրությունների միջոցով ձեւավորվող իշխանությունները եւ հանրության վստահությունն ու իր բնօրրանում ապրելու ձգտման իրականացումն ապացույցներ են պետության կայացման եւ Արցախում բնակվող ժողովրդի իրավունքների իրացման:

Արցախի Հանրապետության օրը այլ երանգով, բայց հենց նույն իրավունքներին տեր կանգնելու անշեղ նպատակաուղղվածությամբ նշվեց նաեւ Երեւանում: Երեւանի Ֆրանսիայի հրապարակում տեղի ունեցած հանրահավաքը հուշում էր, որ ամեն պարագայում վտանգված հայրենիքին տեր կանգնողներ միշտ էլ լինելու են, եւ ապազգային իշխանությունների դեմ պայքարը շարունակվելու է:

Ընդհանուր համայնապատկերում չէր պակասում Ադրբեջանի ու Թուրքիայի նկրտումներն ու Նիկոլ Փաշինյանի իշխանությունների բանսարկությունները ու նենգությունները խաղաղության դարաշրջան կերտելու ձեւակերպումներով: Բոլորի համար արդեն ակնհայտ է Նիկոլ Փաշինյանի եւ իշխանությունը զբաղեցրած պատահական անձանց նվաստացած, խեղճ ու կրակ պահվածքը միջազգային հարթակներում, իսկ հոխորտացող, ցինիկ բառապաշարն ու վարվելակերպը՝ հայ հանրության հանդեպ:

Վարվող այս քաղաքականությունը՝ վախվորած, խեղճացած արտաքին աղետաբեր քաղաքականությունը, միեւնույն ժամանակ՝ թշնամու կողմից ուղիղ սպառնացող հայտարարությունն ու ուժի ցուցադրման նկրտումները հանգեցրին նոր պատերազմական իրավիճակի: Այս անգամ՝ սեպտեմբերի 13-ին, թշնամու ոտնձգությունները տեղի ունեցան Հայաստանի Հանրապետության արեւելյան սահմանի գրեթե ամբողջ երկայնքով: Ունենք տարածքային կորուստներ եւ մեծ թվով զոհեր:

Սեպտեմբերի 13-ին սանձազերծված պատերազմը եւս դաս չեղավ Նիկոլ Փաշինյանի իշխանության համար: Դարձյալ իրար հաջորդող ելույթների ընթացքում Փաշինյանը հոխորտաց, զբաղվեց պոռոտախոսությամբ:

Այս անգամ չուշացավ ժողովրդի կողմից ապտակը: Հենց նույն ժողովուրդը, ովքեր Սեպտեմբերի 2-ը նշեցին՝ որպես իրավունքի իրացման օր, Ստեփանակերտում եւ Երեւանում այս անգամ փաշինյանական բռնատիրությանը վճռականորեն ոչ ասացին:

Հայրենիքը սակարկության առարկա չէ: Մեկ անգամ եւս ստորացնող ստորագրության մասին հայտարարություններն անգամ՝ ուղղակի լինել-չլինելու խնդրի առաջ է կանգնեցնելու իշխանությանն ու յուրաքանչյուր իշխանավորի:

Փաշինյանի սայթաքումն ու ժողովրդի ցասումը

Սեպտեմբերի 14-ին ՀՀ Ազգային ժողովում Փաշինյանը հայտարարել էր, որ պատրաստ է նոր փաստաթուղթ ստորագրել…

«Մենք ուզում ենք ստորագրել մի թուղթ, որի արդյունքում մեզ լիքը մարդ կքննադատի, լիքը մարդ կհայհոյի, լիքը մարդ դավաճան կասի, նույնիսկ կարող ա ժողովուրդը որոշի մեզ իշխանությունից հեռացնել, էլի գոհ ու շնորհակալ կլինենք, որ դրա արդյունքում ՀՀ-ն 29,800 քմ/կմ տարածքով ստանա տեւական խաղաղություն եւ անվտանգություն:

Ես շատ հստակ ասում եմ՝ էն որոշումը, որ սա ապահովելու ա, ես այդ որոշումը, շատ հստակ ասում եմ, ստորագրելու եմ: Ու ինձ չի հետաքրքրում՝ ինչ կլինի հետո ինձ հետ»,- ասել է նա:

ՀՀ վարչապետի՝ նոր փաստաթուղթ ստորագրելու պատրաստակամության մասին հայտարարությունը վրդովվեցրել է ազգային մտածողություն ունեցող յուրաքանչյուրին: Նույն օրը՝ երեկոյան մարդիկ ինքնաբուխ սկսեցին հավաքվել Երեւանում, իսկ զուգահեռ՝ նաեւ Ստեփանակերտի Վերածննդի հրապարակում:

Զայրացած քաղաքացիները Վերածննդի հրապարակում քննադատական ելույթներով էին հանդես գալիս ՀՀ իշխանությունների մասին՝ նրանց որակելով որպես դավաճան, ովքեր Արցախը հանձնելը փորձում են արդարացնել ՀՀ անկախությունը պահպանելով: Հազարավոր քաղաքացիներ եկել էին հրապարակ եւ իրենց կոչն էին հղում ՀՀ եւ ԱՀ իշխանություններին, որ միայն Արցախում ապրող ժողովուրդը կարող է որոշել իր ճակատագիրը եւ ստորագրված բոլոր փաստաթղթերը առոչինչ են իրենց համար:

ԱՀ նախագահ Արայիկ Հարությունյանը, ի պատասխան Ն. Փաշինյանի ելույթի, հանդես է եկել հայտարարությամբ՝ ասելով, որ Արցախի ժողովուրդն է որոշում իր սեփական ճակատագիրը սեփական հայրենիքում, որն ընթեցվեց հանրահավաքի ժամանակ: Հայտարարության մեջ մասնավորապես նշվում էր. «Ոչ մի հանգամանք չի կարող մեզ շեղել մեր ընտրած ճանապարհից՝ Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի առաջնահերթ ու անսակարկելի հիմքով Արցախի Հանրապետության անկախության միջազգային ճանաչումից:

Արցախը չի կարող եւ չպետք է լինի Ադրբեջանի կազմում, քանի որ, նախ՝ Արցախի ժողովուրդն է որոշում իր սեփական ճակատագիրը սեփական հայրենիքում, եւ երկրորդ՝ մենք ցեղասպանության ու հայրենազրկման ենթարկելու ժողովուրդ չունենք:

Մենք բազմիցս հայտարարել ենք ու հիմա էլ վերահաստատում ենք, որ մեզ համար անընդունելի են բոլոր այն փաստաթղթերը, որոնք կարող են Արցախը ճանաչել Ադրբեջանի կազմում: Մյուս կողմից, հարկ է բոլորս գիտակցենք, որ այս դժվարին իրավիճակում մեր պայքարի ուղին երկար է եւ լի մարտահրավերներով, սակայն, վստահ եմ, համազգային ջանքերով մենք ի վերջո հասնելու ենք մեր նպատակներին»:

Նույն օրը հայտարարությամբ հանդես է եկել նաեւ ԱՀ ԱԺ նախագահ Արթուր Թովմասյանը՝ նշելով, որ Արցախի Հանրապետության եւ Արցախի ժողովրդի ճակատագիրը որեւէ անձի, քաղաքական ուժի մենաշնորհը չի եղել եւ չի լինելու:

«Արցախը եղել է, կա եւ լինելու է:

Արցախի Հանրապետության եւ Արցախի ժողովրդի ճակատագիրը որեւէ անձի, քաղաքական ուժի մենաշնորհը չի եղել եւ չի լինելու:

ԱՀ անկախության հարցում անընդունելի են՝ առանց Արցախի ժողովրդի եւ Արցախի ժողովրդի կողմից ընտրված իշխանությունների տեսակետը հաշվի առնելու հայտարարություններ, հարցազրույցներ եւ դիրքորոշումներ հայտնելը:

2020թ. սեպտեմբերի 27-ը մեր կյանքը բաժանել է 2 մասի՝ մինչեւ եւ հետո:

Տարածաշրջանում տեւական խաղաղության դարաշրջանի ճանապարհը հարթ չէ: Այն շատ լավ գիտակցում են ԱՀ Ազգային ժողովի բոլոր քաղաքական ուժերը:

Արցախի խորհրդարանի խմբակցություններն իրենց հայտարարություններում անընդունելի են համարել Ադրբեջանի կազմում կամ դրա շուրջ ցանկացած քննարկում: Դա այն կարմիր գիծն է, որը ոչ ոք խախտելու իրավունք չունի:

Այդ մասին Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանը բազմիցս հայտարարել եւ այսօր էլ վերահաստատել է, որ մեզ համար անընդունելի են բոլոր այն փաստաթղթերը, որոնք կարող են Արցախը ճանաչել Ադրբեջանի կազմում:

Արցախի բռնակցումը Ադրբեջանին՝ կբերի Արցախի ոչնչացման եւ կհանդիսանա աշխարհաքաղաքական պատմական ողբերգություն հայոց պետականության եւ հայ ժողովրդի համար:

Անկախության համար այս երկար ու ձիգ տարիներին մենք չափազանց թանկ գին ենք վճարել: Արցախի նորօրյա պատմությունը, պետական սահմանը գծվել են մեր զոհված ազատամարտիկների արյան գնով:

→ 2

Փաշինյանի սայթաքումն ու ժողովրդի ցասումը

1 ← «Սիրելի՛ հայրենակիցներ,

Մենք մեր պատմությունն անարժան կերպով փակելու բարոյական իրավունք չունենք»,- ասվում էր տարածված հայտարարության մեջ»:

Սեպտեմբերի 14-ին Ստեփանակերտում մեկնարկած եւ մինչեւ ուշ գիշեր շարունակված բազմամարդ հանրահավաքը վերսկսվել է սեպտեմբերի 15-ի առավոտյան:

Ստեփանակերտի Վերածննդի հրապարակում տեղի ունեցած հանրահավաքին մասնակցել են հարյուրավոր քաղաքացիներ. «Նիկոլ դավաճան», «Ազատ ու անկախ Արցախ» վանկարկումներով նրանց են միացել Ստեփանակերտի բուհերի եւ դպրոցների ուսանողությունն ու ուսուցչական անձնակազմը: Հավաքին միացել են նաեւ պետական տարբեր գերատեսչությունների աշխատակիցներ:

Հանրահավաքի մասնակիցների պահանջն էր օրվա իշխանություններից՝ Արցախը Ադրբեջանի կազմում չհայտնվելու երաշխիքների տրամադրումը: Նրանք նաեւ ընդգծեցին, որ ՀՀ վարչապետն իրավունք չունի Արցախի ժողովրդի փոխարեն որեւէ փաստաթուղթ ստորագրել Արցախի կարգավիճակի փոփոխության մասին:

Հանրահավաքում ելույթ ունեցողները նշեցին, որ սա համաժողովրդական հանրահավաք է, որը շարունակական է լինելու: Վերածննդի հրապարակում հավաքված քաղաքացիների պահանջը մեկն էր՝ հարգել Արցախի ժողովրդի կամարտահայտության իրավունքը եւ հավատարիմ մնալ Արցախի Հանրապետության հիմքը հանդիսացող սկզբունքներին:

Հանրահավաքին ելույթով հանդես է եկել նաեւ ԱՀ ԱԺ նախագահ Արթուր Թովմասյանը, որը եւս մեկ անգամ շեշտել է այն փաստը, որ որեւէ մեկն իրավունք չունի առանց Արցախի ժողովրդի կամքը հաշվի առնելու որեւէ փաստաթուղթ ստորագրել:

Ինչպես հայտարարել էին առավոտյան տեղի ունեցած հանրահավաքի ժամանակ, քաղաքացիները կրկին պետք է հավաքվեին Վերածննդի հրապարակում նույն օրը՝ երեկոյան: Նույն օրը տեղի ունեցած 2-րդ հանրահավաքին մասնակցել են նաեւ քաղաքացիներ Արցախի տարբեր համայնքներից:

Ժամը 20:00-ից մեկնարկած բազմամարդ հանրահավաքի ընթացքում ավելի քան 20 քաղաքացիներ իրենց կարծիքն ու տեսակետն են հայտնել ղարաբաղյան հարցի ու Հայաստանի իշխանությունների աղետաբեր քաղաքականության վերաբերյալ:

Հանրահավաքի մասնակիցներին են միացել ԱՀ պետնախարար Արտակ Բեգլարյանը, ԱՀ ԱԺ պատգամավորները՝ ԱՀ ԱԺ նախագահ Արթուր Թովմասյանի գլխավորությամբ, ինչպես նաեւ պետական այլ պաշտոնյաներ:

Խորհրդարանի ղեկավարը հանդես է եկել ելույթով եւ նշել, որ մշտական կապի մեջ է այս օրերին ՀՀ-ում գտնվող ԱՀ նախագահ Արայիկ Հարությունյանի եւ ԱՀ ԱԺ պատվիրակության անդամների հետ, ովքեր հանդիպումներ են ունեցել ԱՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի եւ ԱՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի հետ եւ բացատրություններ պահանջել տեղի ունեցող վերջին զարգացումների եւ Ադրբեջանի՝ ՀՀ սահմանների նկատմամբ իրականացրած ոտնձգությունների վերաբերյալ: Ա. Թովմասյանը փոխանցեց, որ հանդիպումների ընթացքում Ալեն Սիմոնյանն ու Արարատ Միրզոյանը նշել են, որ ՀՀ իշխանությունների դիրքորոշումն Արցախի կարգավիճակի հարցում համընկնում է Արցախի ժողովրդի եւ իշխանությունների դիրքորոշմանը:

Արթուր Թովմասյանը նաեւ ներկայացրել է պատմական ակնարկ Արցախի ու Արցախյան հակամարտության մասին:

Ելույթ ունեցող քաղաքացիները նշել են, որ այս վճռական պահին միայն միասնական պայքարը կարող է կասեցնել Արցախի հայաթափումն ու կործանումը: Նրանք նաեւ շեշտել են օր առաջ ՀՀ իշխանություններից ազատվելու անհրաժեշտությունը, քանի որ մեր ժողովրդին անհրաժեշտ է հայ ժողովրդի շահերն առաջ տանող եւ պաշտպանող ղեկավար, այլ ոչ թե այնպիսի մեկը, ով կատարում է այն ամենը, ինչ իրեն թելադրում են. հաջորդիվ հետեւել է հանրահավաքի մասնակիցների «Նիկո՛լ, դավաճա՛ն» վանկարկումը:

Հանրահավաքներին զուգահեռ՝ Արցախի ԱԺ խմբակցությունների ղեկավարները եւ հանձնաժողովների նախագահները սեպտեմբերի 15-ից Երեւանում են եւ հանդիպումներ են ունեցել Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի, ՀՀ ԱԺ նախագահի եւ երեք խմբակցությունների պատգամավորների, ինչպես նաեւ ՀՀ ԱԳ նախարարի հետ: Հանդիպումների ընթացքում քննարկվել են Նիկոլ Փաշինյանի հայտարարություններին եւ Արցախի կացությանը վերաբերող հարցեր:

Ինքնաբուխ հանրահավաքները շարունակվում են:

Վահագն ԽԱՉԱՏՐՅԱՆ

Սահմանները կապանքներ չեն, շղթաներն էլ՝ կփշրվեն. ուղերձ Ստեփանակերտից

Սեպտեմբերի 2-ին Ստեփանակերտի Վերածննդի հրապարակից հղված կոչ-ուղերձը.

«Սիրելի՛ հայրենակիցներ,

Մայր հայրենիքում եւ աշխարհի տարբեր երկրներում ապրող քույրեր ու եղբայրներ,

Այսօր՝ 2022թ. սեպտեմբերի 2-ին, մենք՝ Ստեփանակերտի Վերածննդի հրապարակում հանրահավաքի մասնակիցներս, դիմում ենք ձեզ մեր ընդհանուր հայրենիքի պատմական մի հատվածի՝ Արցախի ու նրա ժողովրդի համար ճակատագրական մի ժամանակահատվածում, երբ մեր միասնական ջանքերից ու մտածված գործողություններից է կախված պետության ու պետականության ապագան:

Երեսունմեկ տարի առաջ, ուղիղ այս օրը՝ 1991թ. սեպտեմբերի 2-ին, այս նույն հրապարակում մեր հազարավոր հայրենակիցներ «միացում», «ազատություն» եւ «անկախություն» էին վանկարկում՝ հորդորելով արտահերթ նստաշրջանի հավաքված նախկին մարզային խորհրդի ժողովրդական պատգամավորներին՝ ճիշտ որոշում ընդունել հայկական երկրամասի ապագայի հարցում: Պահը վճռական էր, ինչպես հիմա. ազատության համար չպայքարող ազգերը կարող էին մնալ աշխարհաքաղաքական վերադասավորումների ընթացքում քանդվող տերությունների փլատակների տակ:

Այդ օրը ընդառաջ գնալով Լեռնային Ղարաբաղի նախկին ինքնավար մարզի ազգաբնակչության ցանկությանն ու կամքին՝ հռչակվեց Լեռնային Ղարաբաղի՝ Արցախի անկախ հանրապետությունը: Պատմական այդ որոշմանը հաջորդեցին միջազգային իրավունքի սկզբունքներին եւ դեռեւս գործող միութենական պետության օրենսդրությանը համապատասխան իրավական ու քաղաքական գործողությունները՝ համաժողովրդական հանրաքվեն եւ ինքնիշխան պետության օրինական իշխանությունների ընտրությունները:

Անկախ պետության հռչակման քաղաքական գործընթացով նոր էջ բացվեց 1988թ. փետրվարին արցախահայության կողմից նախաձեռնած ազգային-ազատագրական պայքարի տրամաբանության մեջ, որն արտահայտվել էր մայր հայրենիքին Արցախը վերամիավորելու գաղափարախոսությամբ:

Ինքնիշխանության հաստատման ուղին ծանր էր ու հագեցած բազմաթիվ բարդություններով: Ադրբեջանի կողմից ձեռնարկված զանգվածային ջարդերի, բռնաճնշումների եւ էթնիկ զտումների քաղաքականությունը շուտով վերաճեց բացահայտ ռազմական գործողությունների հայկական Արցախի դեմ, որին դիմակայելու համար ոտքի կանգնեց երկրամասի հայ բնակչությունը՝ Հայաստանից ու Սփյուռքից օգնության հասած բազմաթիվ հայրենակիցների հետ մեկտեղ:

Արցախի շուրջ օրեցօր սեղմվող օղակը ճեղքելու եւ հումանիտար աղետից խուսափելու նպատակով եւ ուժերի մեծագույն լարումով հաջողվեց 1992թ. մայիսին ազատագրել հայոց բերդաքաղաք Շուշին, դեպի Սյունիք տանող ճանապարհով Բերձոր քաղաքը՝ ցամաքային հուսալի կապ հաստատելով Մայր հայրենիքի հետ: Ազատության ու անկախության համար պայքարում հազարավոր հայորդիներ իրենց կյանքը նվիրաբերեցին հայրենիքի ապագային: 1992թ. ամռանը հռչակված Արցախի անկախ հանրապետության տարածքի գրեթե կեսը օկուպացված էր հակառակորդի կողմից. մենք կորցրել էինք Շահումյանի շրջանն ամբողջությամբ եւ Մարտակերտի շրջանի մեծ մասը:

Բայց նույնիսկ այդպիսի իրավիճակում հայությունն իր մեջ ուժ գտավ համախմբվելու եւ կերտելու ապագա հաղթանակները: Ազգային բանակի ստեղծումը թույլ տվեց ամուր հիմքերի վրա դնել երկրի պաշտպանության ու անվտանգության հարցերը, որի շնորհիվ 1994թ. մայիսին թշնամին պարտադրված էր զինադադարի պայմանագիր ստորագրել՝ ամրագրելով այդ պահին ռազմաճակատում ձեւավորված իրավիճակը:

Ռազմի դաշտում գրանցած հաջողություններին զուգահեռ՝ ակտիվացավ նաեւ 1992թ. գարնանից ղարաբաղյան հակամարտության կարգավորման նպատակով մեկնարկած եւ Մինսկի խմբի ձեւաչափում կենտրոնացվող բանակցային գործընթացը, որի ամփոփումը հանդիսացավ 1994թ. դեկտեմբերին ԵԱՀԿ Բուդապեշտյան գագաթաժողովի որոշումը՝ Լեռնային Ղարաբաղի՝ որպես հակամարտող կողմի արձանագրումը:

Հետպատերազմյան տարիներին Արցախի Հանրապետությունը, հաղթահարելով բազմաթիվ նոր դժվարություններ, ձեռնամուխ եղավ միջազգային չափանիշներին համապատասխան ժամանակակից իրավական ու ժողովրդավարական պետության կառուցմանը, եւ այդ ջանքերի հանրագումարում 2006թ. ընդունվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առաջին Սահմանադրությունը:

Մինչդեռ Արցախի ժողովուրդը խստորեն հետեւում էր ղարաբաղյան հիմնախնդիրը խաղաղ ճանապարհով լուծելու միջազգային միջնորդների առաջարկած հայեցակարգին, Ադրբեջանը ծածուկ եւ բացահայտ պատրաստվում էր նոր պատերազմի: Ցավոք, մեր բոլոր զգուշացումները միջազգային կազմակերպություններին եւ կարգավորման գործընթացում ներգրավված դերակատարներին սպասված արդյունքներ չունեցան, եւ հակառակորդը, օգտվելով թողտվությունից, մշտական սադրանքներ էր ստեղծում Արցախի սահմանին:

Այդ ամենի կիզակետը պետք է համարել 2016թ. քառօրյա պատերազմը, որի ընթացքում Ադրբեջանը, օգտվելով միջազգային կառույցների ոչ հասցեական արձագանքներից, դիմեց հերթական արկածախնդրության: Այդ նույն օրերին աշխարհաստիյուռ հայությունն աննախադեպ աջակցության օրինակ եւ Արցախը պաշտպանելու բարձր պատրաստակամություն ցույց տվեց եւ, հավանաբար, հենց այդ գործոնները հուշեցին Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարությանը՝ հետ քաշվել եւ ապագա ագրեսիվ ծրագրերի համար խնդրել հակահայ այլ ուժերի օգնությունը՝ Թուրքիայի գլխավորությամբ»:

→ 3

Պետք է միավորվենք եւ կանգնեցնենք այս պարտությունների շղթան

ՀՅԴ Արցախի Կենտրոնական կոմիտեի ներկայացուցիչ Արթուր Մոսիյանի ելույթը ԱՀ հռչակման 31-ամյակին նվիրված հանրահավաքին՝ 2 սեպտեմբեր, 2022թ.

«Մեկ անգամ եւս շնորհավորում ենք բոլորին Արցախի Հանրապետության անկախության 31-րդ տարեդարձի կապակցությամբ: 1988թ. սկիզբ առած ազգային-ազատագրական պայքարն ավարտվեց հաղթանակով, եւ 1991թ. այս օրը հռչակվեց Արցախի Հանրապետությունը: Այդ տարիները համազգային զարթոնքի, միասնության տարիներ էին. Արցախը դարձել էր

համայն հայության գուրգուրանքի, հպարտության եւ արժանապատվության սիմվոլը: Այդ օրերին դրվեց Արցախ-Հայաստան-Սփյուռք եռամիասնության հիմքը: Եվ այդ եռամիասնությունն այնքան ուժեղ էր, որ դիմագրավեց 1991-1994թթ. Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմին: Մեր հազարավոր հայորդիների արյան գնով մենք հաղթեցինք եւ Ադրբեջանին զինադադար պարտադրեցինք: Հաղթեցինք, որովհետեւ միասնական էինք: Նույնը կատարվեց նաեւ 2016-ին: Մեր միասնության շնորհիվ թշնամին հետ շպրտվեց եւ չկարողացավ հասնել զգալի հաջողությունների: Նորից հաջողեցինք, որովհետեւ միասնական էինք:

Իրավամբ, ամեն տոն օր ունի իր խորհուրդը, եւ Սեպտեմբերի 2-ի խորհուրդը կարելի է համարել մեր ոգու, հայի տեսակի եւ միասնությունը ասոցացնող խորհրդանիշ: Դժբախտաբար, նույնը չենք կարող ասել 2020-ի մասին: Երբ 2020թ. պատերազմը մուտք գործեց մեր տուն, մենք ունեինք պառակտված հասարակություն, պարալիզացված պետական համակարգ: Եվ ամեն ինչը պարտությամբ վերջացավ: Այդ պարտությունը մեր ազգի համար համազգային աղետի վերածվեց: Հազարավոր մեր եղբայրների կյանքի գնով եւ Ռուսաստանի միջամտությամբ պատերազմը կանգնեցվեց, եւ ստորագրվեց կապիտուլյացիոն համաձայնագիր: Բայց անգամ այսքանից հետո հասարակությունը չսթափվեց, եւ այս ամենի վերաբերյալ ցույց տվեց հարմարվողական մոտեցում՝ չգիտակցելով, որ սա դեռ վերջը չէ. հարմարվելով սրան՝ մենք ունենալու ենք նոր պարտություններ:

Ես այսօր չեմ անդրադառնա 2020թ. պատերազմի պարտության պատճառներին՝ ոչ նրա համար, որ սա որեւէ մեկը կարող է մոռանալ, այլ միայն նրա համար, որ այսօրվա խորհուրդն ուրիշ է: Պատմությունը եւ անկախ հետաքննությունը ժամանակի ընթացքում անպայման անդրադառնալու են 2018թ. ՀՀ իշխանափոխությանը, օտար ուժերի ներգրավվածությանը, ինչպես նաեւ պարզելու են օրվա իշխանությունների կատարած աշխատանքը՝ արդյո՞ք սա ապաշնորհության, ապիկարության, թե դավադիր պլանի միտումնավոր իրագործում էր: Բայց հավատացեք՝ այս հարցերին անդրադառնալու ժամանակը մենք պարզապես չունենք: Այսօր Արցախը կանգնած է պետականությունը կորցնելու վտանգի առաջ, ուստի մենք պետք է համախմբենք համայն հայությանը՝ փրկելու Արցախը եւ ապա Հայաստանը:

Եթե ձեւակերպելու լինենք Արցախի առջեւ ծառացած մարտահրավերները, դրանք բազում են, բայց հիմնականը երեքն են. առաջինը մեր ժողովրդի պաշտպանության, անվտանգության հարցն է, երկրորդն Արցախի կարգավիճակի հարցն է միջազգային ասպարեզում, եւ երրորդը՝ պատերազմի հետեւանքով մեզ բաժին հասած այն հումանիտար աղետների հետեւանքների վերացումը, մեր բռնի տեղահանված հայրենակիցներին բնակարանով ապահովելը եւ հայրենիք վերադարձնելը: Բանակցային գործընթացի վերջին վայրիվերումները, իրականության հետ կապ չունեցող կեղծ խաղաղության օրակարգերը ցույց են տալիս, որ Հայաստանի Հանրապետության իշխանությունները գնում են սխալ ճանապարհով: ԱՀ Ազգային ժողովի՝ ապրիլի 14-ի ընդունած որոշման մեջ հստակ նշվել են այն կարմիր գծերը, որոնց հատումը որեւէ մեկի կողմից անընդունելի է: Քաղաքական դաշտի որոշ բախտագուշակներ վերը նշված խնդիրների լուծմամբ զբաղվելու փոխարեն մեր իրավունքների պաշտպանությանն ուղղված՝ մեր հայտարարություններն ու շատ առաջարկներ անվանում են արկածախնդրություն:

Մենք հայտարարում ենք, որ դեմ ենք ցանկացած արկածախնդրության: Միեւնույն ժամանակ նշում ենք, որ արկածախնդրության հակառակը վախվորած, ծնկաչոք, հարմարվողական կեցվածքը չէ, պետք է կարողանալ կամաց-կամաց ուղղել մեջքը, ամուր կանգնել եւ հող նախապատրաստել ժամանակի ընթացքում մեր հիմնական խնդիրների լուծման համար: Ժողովրդի առկա բարոյահոգեբանական վիճակը հետեւանք է ոչ միայն եւ ոչ այնքան Ադրբեջանի կողմից հաճախակի դարձած սադրանքների, այլեւ՝ Արցախի եւ Հայաստանի իշխանությունների կողմից ձեւակերպված հիմնական խնդիրները լուծելու կամքի եւ գործողությունների բացակայության կամ անբավարարության, որը ծնում է անորոշություն եւ պատշաճ հող է դառնում նման իրավիճակի համար: Այս ամենը կարող ենք եւ պետք է հաղթահարենք մեր միասնականությամբ, իսկ միասնականության կարելի է հասնել հասարակության բեւեռացումը կանխելով եւ կորցրած վստահությունը վերականգնելով:

Ամեն ինչ պետք է անենք Արցախի օրեցօր թուլացող պետական համակարգն ուժեղացնելու, սուբյեկտայնությունը վերականգնելու համար: Ասվածը չի ենթադրում, թե օրվա իշխանությունը պետք է եւ կարող է շարունակի այն գործելաոճը, որն այսօր կա: Պետական պաշտոնները, հաստիքները, պետության բոլոր կարողությունները պետք է ծառայեն նշված խնդիրները լուծելու համար: Միասնականությունը հնարավոր չէ ապահովել նաեւ արդարության պակասի պայմաններում: Այս ամենը պետք է գիտակցենք եւ անհրաժեշտ հետեւություններ անենք: Պետք է դադարեցնենք մեղավորների փնտրտուքը, չանենք միասնականությունը խաթարող, հասարակությանը պառակտող որեւէ քայլ, եւ համոզված ենք, որ համազգային մոբիլիզացիայով մենք կկանխենք պարտությունների շղթան:

Վստահության ամրապնդման նպատակով հումանիտար տարբեր խնդիրներ լուծելու համար ադրբեջանական կողմի հետ հանդիպումների եւ պայմանավորվածությունների մասին պետք է տրամադրվի այնքան ինֆորմացիա, որը զերծ կպահի հասարակության մեջ տարբեր ասեկոսեների եւ շահարկումների արմատավորումը: Այս պահից սկսած՝ այս ամենը չանելը եւ նման գործելաոճի շարունակությունը բերելու է պետականության կորստի եւ հայրենազրկման: Եթե չսթափվենք, չգիտակցենք պահի ողջ լրջությունը, մենք զրկելու ենք ինքներս մեզ մեր հերոսների շիրիմներն այցելելու անգամ բարոյական իրավունքից:

Հայրենիքը փրկելու միակ ելքը մեր հավաքականությունն է եւ միասնականությունը: Մենք ունենք այդ ներուժը, համոզված ենք՝ մենք դեռ ունենալու ենք նոր տոներ եւ բազմաթիվ հաղթանակներ հայի արդար եւ վրիժառու բազուկի շնորհիվ: Ես, դու, մենք, բոլորս պետք է միավորվենք եւ կանգնեցնենք այս պարտությունների շղթան»:

Սահմանները կապանքներ չեն, շղթաներն էլ կփշրվեն. ուղերձ Ստեփանակերտից

2 ← 2020թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի ձեռնարկած հերթական լայնամասշտաբ պատերազմը ծանր ու աղետաբեր հետեւանքներ ունեցավ մեր ժողովրդի համար: Օգտվելով մեր սխալներից եւ վերջին տարիներին իր կուտակած սպառազինությունների առավելություններից՝ թշնամուն հաջողվեց ոչ միայն լրջորեն վնասել մեր անվտանգային ու պաշտպանական համակարգը, այլեւ զգալի մարդկային ու տարածքային կորուստներ պատճառել մեզ՝ տիրանալով հայկական Շուշիին, Հադրութի ողջ շրջանին եւ պատմական Արցախի այլ ավանդական բնակավայրերի: Հազարավոր մեր հայրենակիցներ հայրենազրկվել եւ ունեզրկվել են՝ ստիպված լինելով ապաստան գտնել Արցախի եւ Մայր Հայաստանի առավել անվտանգ բնակավայրերում: Այն հանգամանքը, որ մեր երկրամասում ծրագրված հերթական ցեղասպանությունը կանխվել է Ռուսաստանի Դաշնության նախագահի անմիջական միջամտությամբ ու Խաղաղապահ ուժերի Արցախ մուտք գործելով, որեւէ կասկած չի կարող հարուցել: Միաժամանակ, մենք համոզված ենք, որ Արցախի անվտանգության ապահովման համար կարեւորագույն բաղադրիչ է մեր սեփական պաշտպանական համակարգի կատարելագործումը:

Հայրենակիցներ,

Այսօր մենք կանգնած ենք լուրջ մարտահրավերների առաջ, որոնք վտանգում են մեր ազգային ինքնությունն ու հայկական պետականության ապագան:

Եվ որպեսզի կարողանանք հաղթահարել մեզ համակած պարտվողական տրամադրությունները եւ վերագտնել 1988 եւ 1991 թվականների ՀԱՅ-ի նպատակասլաց տեսակը, ինչպես նաեւ համաձայնեցված ու համակարգված աշխատանքներ նախաձեռնել ստեղծված իրավիճակը փոխելու համար, խիստ անհրաժեշտ է, որպեսզի մենք ազգովի համախմբվենք միասնական հայկական օրակարգի շուրջ:

Իսկ դա նշանակում է.

1. Հենց այսօր, պատմական 1991թ. սեպտեմբերյան օրերից 31 տարի անց, արտահայտելով ողջ արցախահայության տեսակետն ու կամքը, այս նույն հարթակից մենք հայտարարում ենք, որ մեր ռազմավարական նպատակը՝ Արցախը մայր հայրենիքին միավորելու գաղափարը, չի փոխվել, եւ, որ շատ կարեւոր է, Արցախի Հանրապետության միջազգային ճանաչումը այդ ռազմավարական նպատակին մոտեցնող անհրաժեշտ քայլերից մեկն է:

2. Մենք ազդարարում ենք ի լուր աշխարհի, որ Արցախի ժողովրդի համար անընդունելի է Արցախի պետական համակարգը խաթարող ցանկացած կարգավիճակ, եւ ինքնիշխան պետությունը Արցախի ժողովրդի անվտանգության եւ իրավունքների պաշտպանության անհրաժեշտ նախապայմանն է:

3. Արցախի ապագայի շուրջ բոլոր ներկա եւ գալիք բանակցողները պարտավոր են հիմք ընդունել վերոնշյալ արձանագրումները եւ զգուշանալ այն կարմիր գծերից, որոնք նշվել են Արցախի Ազգային ժողովի ս. թ. ապրիլի 14-ի հայտարարության մեջ: Մենք պահանջում ենք առաջնորդվել միմիայն հնչեցված օրակարգի դրույթներով:

4. Միջազգային իրավասու կառույցներից եւ առաջին հերթին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրներից պահանջում ենք հավատարիմ մնալ ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործում ամենաբարձր մակարդակով իրենց ստանձնած մանդատին եւ առաջնորդվել Մինսկի խմբի շրջանակներում ընդունված սկզբունքներով:

5. Համայն հայությանը, մեր քույրերին ու եղբայրներին կոչ ենք անում շարունակել ապրել Արցախով, բոլոր հնարավոր միջոցներով օժանդակել Արցախի վերականգնմանը եւ Արցախին վերաբերվել՝ որպես համազգային ձեռքբերում ու հպարտություն:

Սահմանները կապանքներ չեն, շղթաներն էլ կփշրվեն:

Արցախը շարունակելու է պայքարը, եւ մենք դեռ տոնելու ենք նոր հաղթանակներ»:

ք. Ստեփանակերտ
02 սեպտեմբերի, 2022թ.

Շինականից մինչեւ երկրի ղեկավար, զինվորից մինչեւ հրամանատար՝ լինենք մաքուր եւ արդար մեր կոչման ու ծառայության մեջ

Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանն ուղերձ է հղել Արցախի Հանրապետության օրվա կապակցությամբ.

««Արդարությունը բարձրացնում է ազգին,
բայց մեղքը ժողովուրդներ է կործանում»
(Առակաց 14:34)

«Սիրելի Հայրենակիցներ,

Աստվածաշնչի Առակաց գրքի հետեւյալ տողերն են գալիս մեր մտքին, երբ Արցախի անկախության վերարժեւորման համազգային այս համախմբման պահին սկսում ենք մտորել մեր երկրի անցյալի, ներկայի եւ ապագայի մասին:

Անկախությունը աստվածային շնորհ է, որն ամենաառաջնային եւ կենսական պահանջն է ազգի ազատ, արժանապատիվ եւ ստեղծագործ կյանքով ապրելու համար: Կատարյալ աշխարհում իրավունքն է ուժի աղբյուրը, բայց, ցավոք, աշխարհը վաղուց է կորցրել իր կատարելությունը, եւ այսօր ուժն է ծնում իրավունք: Ուստի, մենք ստիպված ենք ուժով պաշտպանել մեր Աստվածատուր իրավունքներն ու ազատության պարգեւը:

Անկախության ճանապարհը մեզ համար դարձել է խաչի ճանապարհ, եւ մենք ազգովի դարձել ենք այդ խաչի կրողները՝ այն դարձնելով մեզ համար անխորտակելի հզոր զենք, եւ այդ ճանապարհից շեղվելու իրավունք չունենք: Լինել Քրիստոսի խաչակիցը՝ չի նշանակում գնալ արհեստական նեղությունների եւ դժվարությունների հետեւից, այլ կյանքի ուղիղ եւ արդար ճանապարհին հանդիպած նեղությունները կրել համբերությամբ, հավատով եւ սրբությամբ՝ ինչպես մեր Տեր Հիսուս Քրիստոս: Կարծես թե մենք համբերում ենք, կարծես թե մենք հավատում ենք, բայց թերանում ենք մեր սրբության մեջ:

Ինչպես որ մեղքը պատճառ է դառնում մարդու կորստյան, նույն կերպ է լինում նաեւ այն ազգերի պարագայում, որոնց մոտ պակասում է Աստծո երկյուղը եւ զորանում է եսասիրությունը: Աստվածային օրենքներից զուրկ երկրում ամեն մարդ ինքն է իր աստվածը եւ աշխարհը իր շուրջն է պտտվում: Ակամա ամենքն ապրում եւ գործում են ամենքի դեմ, եւ այս ծածուկ պատերազմի հետեւանքը լինում է այն, որ ազգը ջնջվում է երկրի երեսից, կամ էլ գերի դառնում ուրիշ ազգերի: Աստծո հանդեպ անկեղծ հավատքի եւ բարոյական, առաքինի կյանքի մեջ է թաքնված մեր ազգի փրկության բանալին:

Միաբանությունը դեռ ոչ մի ազգի չի կործանել, բայց երբ քաղաքացիների անձնասիրությունն ու սեփական շահն է սկսել գլուխ բարձրացնել՝ երկիրը երկու կողմերի բաժանել, մարդկանց իրար հակառակ դարձրել, ահա այդ ժամանակ է, որ սկսվել է այդ ազգի համար գերության շղթա հյուսվել:

Արցախը մի դրախտային այգի է, իսկ մենք նրա մշակները: Շատերն են ուզում տիրանալ մեր այգուն: Այսօր այն կարկտահարվել է, սողանքների պատճառով տրոհվել ու փոքրացել՝ իր հետ տանելով այգու երիտասարդ մշակներից շատերին: Այգին այսօր հիվանդ է, խնամքի կարիք ունի, հենարանի կարիք ունի, եւ մենք, որպես կենդանի մշակներ, մեր միասնական ջանքերով պիտի վերակենդանացնենք Հայոց Արա թագավորի հիմնած այգին՝ վանելով մեզանից չարի բոլոր կործանարար երեւույթները, հուսահատությունը, անտարբերությունը, խուճապը, տագնապը, երկրից հեռանալու մտածումները, որովհետեւ Սուրբ Գիրքը մեզ ուսուցանում է, որ վախը թերահավատության նշան է:

Այս է աշխարհի հավիտենական կարգը, այս է ազգերի վրա Աստծո կատարած դատաստանը: Բոլորս պետք է մեր տեղում եւ դիրքում՝ շինականից մինչեւ երկրի ղեկավար, զինվորից մինչեւ հրամանատար, լինենք մաքուր եւ արդար մեր կոչման եւ ծառայության մեջ: Ուստի, եթե մենք իրոք սիրում ենք մեր երկիրը, իրոք մեզ համարում ենք հայ ազգի եւ Արցախի սրբազան հողի մի մասնիկ, պետք է հասկանանք, որ յուրաքանչյուրիս արդար կյանքից է կախված մեր երկրի հզորությունն ու հարատեւությունը:

Թող Աստված իմաստություն տա մեր ազգին, որպեսզի լինենք զգոն եւ խիզախ՝ արդարության ճանապարհով մեր ազգին նորից բարձրացնելու համար:

Այս նվիրական օրը ձեզ ենք բերում նաեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ նրա գահակալի՝ Ամենայն Հայոց Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի ջերմագին օրհնություններն ու բարեմաղթանքները:

Եկեք բոլորս միասին աղոթք բարձրացնենք առ ամենակալն Աստված մեր ազգի պահպանության, հարատեւության եւ բարօր կյանքի համար»:

02 սեպտեմբեր, 2022թ.

Բոլոր հիմքերը կան, որ փրկենք Արցախը. Դավիթ Բաբայան

ԱՀ արտաքին գործերի նախարար Դավիթ Բաբայանի ելույթը 2022թ. սեպտեմբերի 2-ին Արցախի Վերածննդի հրապարակում կայացած հանրահավաքին.

«Ի սրտե շնորհավորում եմ այսօրվա կարեւորագույն տոնի կապակցությամբ: Սեպտեմբերի 2-ը Արցախի Հանրապետության ծննդյան օրն է: Բնական է, որ վերջին մեկուկես-երկու տարիների ընթացքում մենք կարծես թե միայն հիշում ենք այս օրը, չենք տոնում այնպես, ինչպես որ տոնում էինք մինչեւ 2020թ. այս սարսափելի Արցախյան երրորդ պատերազմը: Ինչ-որ տեղ սա բնական է, որովհետեւ այդքան անդառնալի կորուստները տոնակատարությունների համար տեղ չեն թողնում, սակայն մենք իսկապես պարտավոր ենք հիշել այս օրը, որովհետեւ Արցախի Հանրապետության համար իրենց կյանքն են նվիրաբերել մեր ազգի սերուցքի հազարավոր ներկայացուցիչներ, երիտասարդներ, որոնք հանգչում են մեր հուշահամալիրում, Եռաբլուրում: Այս օրվա, Արցախի պայծառ, հուսալի ապագայի, Արցախի արժանապատիվ ապագայի համար իրենց կյանքն են զոհաբերել մեր լավագույն քույրերն ու եղբայրները:

Դուք՝ յուրաքանչյուրդ, լինելով Արցախում, ապրելով այստեղ, պահպանում եւ պաշտպանում եք Արցախը, հետեւաբար՝ սա մեծ տոն է ողջ մեր հայ ժողովրդի համար, որովհետեւ սեպտեմբերի 2-ը հայոց պատմության շրջադարձային օրերից է: Արցախի Հանրապետությունը հանդիսանում է հայության զավակը, եւ բոլորս պետք է պահպանենք եւ պաշտպանենք Արցախի Հանրապետությունը:

Սիրելի՛ ժողովուրդ, բնական է, ձեզնից յուրաքանչյուրը հիմա մտահոգ է, մտածում եք՝ ի՞նչ է լինելու մեզ հետ,

արդյո՞ք հնարավոր է լինելու փրկել, զարգացնել, զորացնել եւ պաշտպանել Արցախը: Իսկապես իրավիճակը բավականին բարդ է. սա ամենաբարդ իրավիճակն է մեր պատմության մեջ: Ես չեմ ուզում ամպագորգոռ բառերով այստեղ ձեզ դիմել, չեմ սիրում ստել եւ մոլորության մեջ գցնել ժողովրդին, որովհետեւ սա հավասար է հանցագործության եւ դավաճանության: Սակայն, բոլոր հիմքերը կան, որ մենք փրկենք Արցախը: Մի՛ հավատացեք նրանց, ովքեր կասեն, թե ամեն ինչ որոշված է, մի՛ հավատացեք նրանց, ովքեր կասեն՝ դուք որեւէ հնարավորություն չունեք կանգնելու եւ փրկելու մեր երկիրը:

Քույրե՛ր եւ եղբայրնե՛ր, ամեն ինչ այստեղ բացառապես կախված է մեզանից: Որպեսզի մենք կարողանանք մեր ողնաշարը նորից ուղղել եւ հպարտ ու արժանապատիվ քայլել այս աշխարհում, անհրաժեշտ է մաքրել մեր հոգիներն ու սրտերը. սա է մեր հաղթանակների բանալին: Նաեւ կան աշխարհաքաղաքական հնարավորություններ, որովհետեւ Արցախի Հանրապետության գոյության, նրա զարգացման եւ ընդհանրապես ապագայի մեջ կա նաեւ աշխարհաքաղաքական շատ լուրջ ուժերի եւ կենտրոնների շահագրգռվածություն: Բայց շատ բան կախված է նաեւ մեզանից՝ ինչպես ենք մենք աշխատելու, ինչպես ենք կարողանալու մեր երկիրը շենացնել եւ զարգացնել, ինչ քայլեր պետք է ձեռնարկենք. եւ այստեղ որեւէ մեկը չի կարող մեզ պարտադրել:

1988թ. վառ օրինակը թող բոլորի աչքերի առջեւ լինի. մենք դուրս ենք եկել ամբողջ աշխարհի դեմ եւ կարողացել ենք հասնել հաղթանակի, որովհետեւ մեր նպատակները մաքուր են եղել, եւ ժողովուրդը իսկապես արժեքների համար է պայքարել, ոչ թե ինչ-որ բարիքների համար: Հետեւաբար, մաքուր լինենք, ուժեղ լինենք, հավատանք մեզ, հեռու լինենք դեմագոգներից, հեռու լինենք փողոցայիններից. սա է բանալին: Հավատացեք ձեզ, հավատացեք, որ ամեն ինչ կարող է լավ լինել, եթե լավ աշխատենք, եւ այդտեղ մենք իրոք պետք է միասնական լինենք, երբեք չհուսահատվենք: Մենք այն ազգն ենք, որին հնարավոր չէ հաղթել դրսից, բայց հնարավոր է ներսից այլասերել եւ կործանել: Սա է ուզում թշնամին, չի ստացվելու: Մենք պետք է միշտ ուժեղ լինենք, պարզապես լցվեք համբերությամբ եւ արցախցու, հայի ոգին հզոր պահեք:

Ես կրկին շնորհավորում եմ ձեզ եւ ուզում եմ բոլորիդ հետ միասին ասել՝ կեցցե Արցախի Հանրապետությունը, կեցցե մայր Հայաստանը, կեցցե Սփյուռքը, իմաստություն, ուժ ու կորով մեր ժողովրդին»:

«Վարանդա» երգչախմբի 30-ամյակն է

Շուշիի ազատագրումն ու «Վարանդա» մանկական, պատանեկան եւ երիտասարդական պետական երգչախումբը տարեկիցներ են: 1993-ին Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ուսանող, խմբավար, շվիահար ու դուդուկահար Զաքար Քեշիշյանի կողմից Շուշիի Արամ Մանուկյանի անվան վարժարանում հիմնադրված երգչախումբը նպատակ ուներ պատերազմի արհավիրքն ապրող շուշեցի մանուկների ու պատանիների դեմքերի արցունքը չորացնել, ժպիտ ուրվագծել, հոգեւոր ու երաժշտական ավանդներ սնուցել: Հաջորդող տարիներին երգչախումբը պետականացվել է եւ այժմ իր ստեղծագործական կյանքը շարունակում է երեք՝ մանկական, պատանեկան եւ երիտասարդական կազմերով:

Երգչախումբը ավելի քան 200 համերգով հանդես է եկել Արցախի տարբեր շրջաններում, զորանոցներում, դպրոցներում, ինչպես նաեւ Հայաստանում եւ Լիբանանում, համատեղ համերգներ է ունեցել իր քույր՝ Լիբանանի Համազգայինի «Կարկաչ» մանկապատանեկան եւ «Այգ» երիտասարդական երգչախմբերի հետ, որոնց հիմնադիր գեղարվեստական ղեկավարը եւս Զաքար Քեշիշյանն է:

«Վարանդա» երգչախմբի 30-ամյակը նշվում է Ստեփանակերտում, բեմում են երգչախմբի հին ու նոր անդամները: «Երգող Արցախ» խորագրով համերգը երկրորդ տարին է ընթանում: Փոխվել է առաքելության ձեւաչափը, վայրը, երգչախմբին միացել են Հադրութից, Ստեփանակերտից, այլ վայրերից երեխաներ: Անցած տարի 89, այս տարի 120 հոգի են երգչախմբի կազմում: Բեմում հնչել են ե՛ւ նոր խմբերգերի առաջին կատարումները, ե՛ւ անցած 30 տարիների ընթացքում «Վարանդա» երգչախմբի խթանումով ծնունդ առած 169 խմբերգերից գողտրիկ մի փունջ:

«Վարանդա» երգչախումբը բարի ավանդույթ ուներ. ամեն անգամ համերգաշարերից հետո հավաքվում էին Շուշիի Ղազանչեցոց եկեղեցու բակում եւ երգում «Երազ իմ, երկիր հայրենի» երգը: Այս անգամ Ստեփանակերտի «Ազատամարտիկների» պուրակում տեղադրված արցախյան 44-օրյա պատերազմի նահատակների լուսանկարների առջեւ երգչախմբի անդամներն ու հրավիրյալներն ի կատար ածեցին ավանդույթը:

Հիմա ավելի անհրաժեշտ է Արցախին թեւ-թիկունք կանգնելը, քան խաղաղության ժամանակ

ՀՅԴ անդամ, Համազգային հայ կրթական եւ մշակութային միության ատենապետ Զաքար Քեշիշյանը «Ապառաժ»-ի հետ զրույցում նշում է, որ հիմա ինչ վիճակում էլ լինենք, այն փաստը, որ 30 տարի առաջ մեր հերոսները արյան գնով ազատագրեցին Շուշին, այսօրվա դրությամբ չի նսեմանում, այլ, ընդհակառակը, հավատք ու ուժ է տալիս, որ եթե մի անգամ ազատագրել ենք, նշանակում է՝ էլի կկարողանանք: «Տխրություն, թախիծ եմ զգում, քանի որ արյան գնով ազատագրածը չկարողացանք պահել մեր խելքի եւ հայրենասիրության մակարդակի անկման պատճառով: Համենայն դեպս, ուրախ եմ, որ ճակատագրով ինձ վիճակվեց Շուշիում ստեղծել «Վարանդա» երգչախումբը: Սկսած ՀՅԴ «Նիկոլ Աղբալյան» ուսանողական միության ջանքերով ստեղծված վարժարանից, հաջորդող 30 տարիներին հավատարիմ էի իմ առաքելությանը: Ես իմ հոգու հետ հաշտ եմ, որ իմ բաժին կռիվը իմ զենքերով տարել եմ: Այդ մխիթարանքն ունեմ՝ ի տարբերություն շատերի»,- նշում է երգչախմբի հիմնադիրը:

Խոսելով պատերազմի հետեւանքների մասին, Զ. Քեշիշյանը նշում է, որ վախենում է հարմարվողականությունից՝ երբ սկսենք ստեղծված կացությանը ընտելանալ, թուլանալ: Նա հիշում է պաղեստինցիների օրինակը, ովքեր հակառակ նրան, որ կարող էին լավ պայմաններում ապրել, ապրում էին վրաններում, քանի որ գտնում էին, որ դա իրենց տունը չէ ու պետք է վերադառնան իրենց տուն: Այդ առումով, նրանց պայքարը օրինակելի է, ունեն վերադարձի նկատմամբ հավատ:

Երեխաները մեծ սիրով են մասնակցում երգչախմբի պարապմունքներին, չնայած այսքան զոհերը, տարածքների կորուստը բոլորի մտքում է: «Մարդիկ կարծես թե՛ օրվա հացը ճարած ապրում են, բայց երբ առանձին ես մնում, նրանց աչքերում տեսնում ես թախիծ, անորոշություն, տագնապ առաջիկա օրերի նկատմամբ. այս իմաստով՝ Արցախը պետք է լինի հայ ժողովրդի ամեն ինչը եւ ամենամեծ առաջնահերթությունը: Մեր ժողովրդի այս հատվածը այսքան տարիների ընթացքում պայքարեց, այսքան զոհեր տվեց, կռվեց նաեւ այստեղ չեղողների փոխարեն, ապրում է անորոշ օրեր նաեւ այստեղ չեղողների փոխարեն: Հետեւաբար, այստեղ չգտնվողները պարտականություն ունեն այս հողի եւ ջրի, այստեղի մարդկանց նկատմամբ»,- կարծում է երգահանը:

Նրա խոսքով՝ ամբողջ հայությունը շփոթահար վիճակում է, պետք է սթափվել. «Ապրում ենք մեր պատմության ամենաճակատագրական պահերը:

Կամ ազգովի կզարթնենք, կմիավորվենք, վերստին կիմաստնանանք, վերստին կգոտեպնդվենք ու հենց թշնամու աչքի առաջ կկերտենք հզոր հայրենիք, վաղն էլ վերատիրանալու համար նրան, ինչ կորցրել ենք, կամ էլ, ասորեստանների պես, մեր մասին էլ հաջորդող դարերում մարդկությունը կկարդա ու կսովորի պատմության դասագրքերից: Իսկ այդ վաղն արդեն մեր դռանն է, չի՛ ուշանալու...»:

Պետք է գիտակցենք, որ հիմա ավելի անհրաժեշտ է Արցախին թեւ-թիկունք կանգնելը, քան խաղաղության ժամանակ: «Արցախը նրա համար չէ, որ մարդիկ զվարթ, հայրենասիրական զգացումներով գան նկարվեն, կերուխում անեն ու գնան: Հիմա է վայրը, «մարտադաշտը»՝ ոչ զենքով: Հիմա այստեղ պետք է գա յուրաքանչյուրը Հայաստանից, Սփյուռքից եւ իր մասնագիտական ներդրումն անի: Եթե ոչինչ էլ չանի, Ստեփանակերտի փողոցներում քայլի ու արցախցիները տեսնեն, որ իրենք մենակ չեն, չեն լքվել, դա էլ ինքնին մեծ բան է»,- ասում է Զաքար Քեշիշյանը:

«Ապառաժ»-ը զրուցել է «Վարանդա» երգչախմբի նախկին ու ներկա մի խումբ սաների հետ.

Անպայման նորից երգելու ենք Շուշիի բեմից. Մանան Ավետիսյան, 32 տարեկան

1997-ից հաճախում եմ «Վարանդա» երգչախումբ: 1996թ., երբ տեղափոխվեցի Շուշի, առաջին տպավորությունս այն էր, որ ինչ-որ երեխաներ ոմն պարոն Զաքարի էին ճանապարհում, ու ինձ համար հետաքրքիր էր արդեն՝ պարոն Զաքարն ով է. այդ ժամանակ 6 տարեկան էի: Ես էլ իրենց հետ սպասեցի եւ հաջորդ

տարվանից մասնակցեցի պարապմունքներին, ու ոչ միայն ես, մեր ընտանիքի 4 երեխաները: Երգչախումբը հոգեւոր սնունդ, միասնականություն է տվել: «Վարանդա» երգչախումբը մի մեծ ընտանիք է, որտեղ ամեն տարի սրտի թրթիռով սպասում էինք, թե երբ պիտի գա ամառը, որ պարոն Զաքարը վերադառնա:

25 տարի շարունակ երգել եմ երգչախմբում, հիմա տեղափոխվել ենք Ստեփանակերտ: Այսօրվա դրությամբ մի աղջիկս երգում է երգչախմբում, մյուսն էլ մասնակցում է պարապմունքներին, բայց դեռ բեմում չէ: Շատ հուզված եմ, որ այսօր աղջիկս է բեմում ու սրտի թրթիռով սպասում եմ, որ մի օր անպայման Շուշի ենք վերադառնալու ու անպայման երգելու ենք Շուշիի բեմից, որովհետեւ Շուշին մերն է, մերն է մնալու: Հենց դա է սովորեցնում պարոն Զաքարը իր երգերի, իր նվիրվածության շնորհիվ՝ թե՛ Լիբանանից գալով, թե՛ Սփյուռքը, հայերի միասնականությունը ցույց տալով: «Երգող Արցախ»-ը խորհրդանշում է, որ այսքան վատ դեպքերից, այս պատերազմից հետո ունենք այն գաղափարը, որ մեզ ոչ ոք ծնկի չի բերի, ու մենք երգելու ենք՝ աշխարհի որ ծայրում էլ լինենք:

Շուշիի իմ կարեւոր ձեռքբերումներից մեկը «Վարանդա» երգչախումբն էր. Լիլիթ Ավանեսյան, 22 տարեկան

Ծնունդով, հոգով ու ոգով շուշեցի եմ: Շուշիի իմ կարեւոր ձեռքբերումներից մեկը «Վարանդա» երգչախումբն էր, ու շատ ուրախ եմ, որ 16 տարի հաճախել եմ: Այս տարի ուրախ պատճառով չեմ մասնակցում երգչախմբին: Շատ անսովոր է, որ այսօր պիտի դահլիճից հետեւեմ հանդես եկողներին: Երիտասարդական խմբից 4 հոգի ամուսնացել են, երեխա ունեն, եւ այդ պատճառով այս տարի երիտասարդական խումբը ելույթ չունեցավ: Միգուցե հաջորդ տարի, երբ երեխաները մի քիչ մեծանան, հնարավոր լինի ելույթ ունենալ:

Շուշիում «Վարանդա»-ի մի քանի խումբ էր գործում՝ Ցորենի հատիկ, Պատանեկան, Երիտասարդական: Ես 6 տարեկանից հաճախել եմ պարապմունքներին: Ամենաշատը տպավորվել է այն, որ ամեն ամառ շուշեցի երեխաները սպասել են հենց պարոն Զաքարի գալուն: Շուշիում երեւի այնպիսի երեխա չկա, որ «Վարանդա»-ի ընտանիք մտած չլինի: Պարոն Զաքարը Շուշիի համար շատ կարեւոր մարդ է, բոլոր շուշեցիները ճանաչում էին նրան: Նա մեծ ավանդ ունի, եւ ես շատ ուրախ եմ, որ ինքը պատերազմից հետո շարունակում է իր առաքելությունը:

Պարոն Զաքարին նայելով՝ հսկայի տպավորություն է թողնում, բայց շատ նուրբ հոգի ունի: Երբ ինչ-որ հուզումնալից բան է լինում, իսկույն հուզվում է: Հավատում եմ, որ նորից ենք Շուշիի Ղազանչեցոց եկեղեցու մոտ երգելու «Երազ իմ երկիրը»: Եթե հավատը կորցնենք, ամեն ինչ կորչելու է. այդ հավատն է մեզ պահում:

Ինչքան երգչախումբը լինի, կերգենք. Մարինե Սարգսյան, 17 տարեկան

10-րդ տարին է, ինչ հաճախում եմ «Վարանդա» երգչախումբ: Դեռեւս Շուշիում, երբ պարոն Զաքարն այնտեղ էր, հաճախում էի. ամեն տարի նոր երգեր էինք սովորում: Երբ պատերազմից հետո իմացա, որ պարոն Զաքարը կրկին ցանկանում է վերաբացել երգչախումբն արդեն Ստեփանակերտում, անմիջապես ցանկացա նորից շարունակել: Ինչքան երգչախումբը լինի, կերգենք:

Երգչախմբի հետ անցկացրած ժամանակը հիշարժան պահեր, նոր ընկերներ է պարգեւել. Մարատ Բաղրամյան, 13 տարեկան

Ես սովորում եմ Գյուրջյանի անվան երաժշտական դպրոցում, ու ցանկանում եմ երաժշտական ասպարեզում մասնագիտանալ: Անցած տարի, երբ պարոն Զաքարը սկսեց Ստեփանակերտում պարապմունքներ անցկացնել, սկսեցի մասնակցել: Երգչախմբի հետ անցկացրած ժամանակն ինձ ուրախություն է պարգեւել, հիշարժան պահեր, նոր ընկերներ:

Տաթեւիկ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Բեկորի կիսանդրու բացումը Ստեփանակերտի Աշոտ Ղուլյանի անվան դպրոցում

Սեպտեմբերի 6-ին Ստեփանակերտի Աշոտ Ղուլյանի անունը կրող թիվ 2 դպրոցի բակում կայացել է ՀՅԴ անդամ, ԼՂՀ Ստեփանակերտի առաջին վաշտի հրամանատար, «Արցախի հերոս», «Մարտական խաչ» առաջին աստիճանի շքանշանակիր Աշոտ Ղուլյանի կիսանդրու բացման արարողությունը: Հերոսի կիսանդրու տեղադրման նախաձեռնությունը ՀՅ Դաշնակցության Արցախի կառույցինն է, իսկ ֆինանսավորումն իրականացրել է ավստրալահայ երիտասարդ բարերար Շանթ Կրաջյանը՝ ԱՀ կառավարության հետ համատեղ:

Բեկորի անունը կրող դպրոցի տնօրեն Լաուրա Մարտիրոսյանը, շնորհակալություն հայտնելով նախաձեռնության հեղինակներին՝ նշել է, որ Աշոտ Ղուլյանը մեզ պատգամել է ճիշտ ապրել, ճիշտ քայլել եւ միասնաբար պահել հայրենիքը: «Ամեն օր այս դպրոց են մուտք գործում 1100 աշակերտներ եւ ուսուցիչներ: Ամեն առավոտ խոնարհվելու ենք Բեկորի վեհաշուք կիսանդրու առաջ, նորից ուխտ ենք անելու, որ ապրելու ենք ճիշտ, քայլելու ենք ճիշտ»,- ասել է Լ. Մարտիրոսյանը:

ՀՅԴ Բյուրոյի անդամ, ԱՀ ԱԺ պատգամավոր Դավիթ Իշխանյանը, ներկայացնելով նախաձեռնության մասին, տեղեկացրել է, որ գաղափարը մի քանի տարի առաջ է ծագել, երբ ՀՅԴ անդամների հետ հանդիպման ժամանակ տնօրենը հորդորեց դպրոցում կանգնեցնել Աշոտ Ղուլյանի դիմաքանդակը:

«Մեր խոստումը կարող ենք համարել իրականացված: Պատահական չէ, որ Աշոտի հայացքը սեւեռված է դեպի Շուշի, այսօր իր կիսանդրու կողքին կանգնած են փառապանծ բանակի զինվորները եւ ապագա սերունդը: Այս ամենն իր մեջ խորհուրդ ունի՝ առ այն, որ Աշոտ-Բեկորի գաղափարները դեռեւս իրականանալու են: Եթե մեր սերունդը, իր ժամանակակիցները չեն կարողացել ամբողջականացնել այդ գաղափարը, վստահ ենք, որ նոր սերունդը այն կարող է իրականություն դարձնել: Համոզված եմ, որ այդ նպատակները կիրականան ու Աշոտ-Բեկորի կիսանդրու առջեւ խոնարհվողը հպարտությամբ կլցվի: Մեր խոնարհումը կարող է լինել միայն մեր նահատակների եւ մեր մեծերի շիրիմներին»,- իր խոսքում նշել է ՀՅԴ Բյուրոյի անդամը:



Կիսանդրու տեղադրման աշխատանքներին աջակցել է նաեւ Ստեփանակերտի քաղաքապետարանը: Քաղաքապետարանի կրթության եւ սպորտի բաժնի պետ Թերեզա Ղարախանյանի խոսքով՝ ազգային-ազատագրական պայքարի յուրաքանչյուր փուլ ծնել է հերոսներ, որոնք իրենց անձնական կյանքով, իրենց ապրած ժամանակաշրջանով տարբերվում էին, բայց նրանց անձնական կեցվածքը նույնն էր՝ հայրենասեր, հայրենատեւ, մահ իմացյալ ընդունելու պատրաստակամությամբ: Դիմելով աշակերտներին՝ Թերեզա Ղարախանյանը նշել է, որ նրանք իրավունք ունեն հպարտանալու, որ սովորում են Աշոտ Ղուլյանի անունը կրող կրթօջախում:

ԱՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Միքայել Համբարձումյանը ներկաների հետ կիսվել է ուսանողական տարիների մի դրվագով. «Մի թեժ ժողովում հանդիպեցի Բեկորին. նա դեռ այդ անունը չուներ: Ժողովում քննարկվում էին տարբեր հարցեր, Աշոտին դուր չեկան որոշ դրույթներ, եւ նա ձեռքը թափ տվեց՝ ասելով՝ զինվել է պետք եւ վերջ: Ուրիշ բան չի ասել: Սա է նաեւ մեր այսօրվա կարգախոսը՝ զինվել ուղիղ եւ փոխաբերական իմաստով: Պետք է մեր երեխաներին զինել գիտելիքներով, որովհետեւ գիտելիքը ամենաանխոցելի զենքն է, մեր ուսուցիչներին՝ մանկավարժական հմտություններով, մեր պետական այրերին՝ ճշմարտությունը եւ արդարությունը գնահատելու կարողություններով եւ այսպես շարունակ»,- նշել է Մ. Համբարձումյանը՝ կոչ անելով ձեւավորված միասնականության միջոցով ներկա ողորմելի օրերը շուռ տալ լավերի:

Բեկորի մարտական ընկեր Աշոտ Սարգսյանն իր ելույթում անդրադարձել է Աշոտ Ղուլյանի մարդկային որակներին մասին:

ԱՀ անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միության նախագահ Վերա Գրիգորյանը «Հայրենիք եւ հավատ» մեդալով պարգեւատրել է Աշոտ Ղուլյանի այրուն՝ Նելլի Ղուլյանին: Անհայտ կորած իր որդին՝ Սպարտակը, Բեկորի վաշտում 3 ամիս 20 օր է ծառայել, այնուհետեւ հրամանատարը հեռացրել է վաշտից՝ որպես տան միակ զավակի:

Հուշակոթողի հեղինակը քանդակագործ Յուրի Հովհաննիսյանն է, ճարտարապետը՝ Սերգեյ Ադամյանը: Կիսանդրու բացման պատիվը տրվել է դպրոցի տնօրեն Լաուրա Մարտիրոսյանին, Նելլի Ղուլյանին եւ Բեկորի թոռ Աշոտ Ղուլյանին:

Հանդիսավոր արարողությանը ներկա էին ԱՀ պետական նախարար Արտակ Բեգլարյանը, պատգամավորներ, պետական այրեր, Բեկորի մարտական ու կուսակցական ընկերները, հարազատները, դպրոցի մանկավարժական եւ աշակերտական կոլեկտիվը:

Տաթեւիկ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ՀՅԴ երիտմիությունները՝ Արցախի պատանիների համար

Ամառային շրջանում ՀՅԴ Արցախի երիտասարդական եւ պատանեկան միությունների ընթացիկ ծրագրերում ավելանում է նաեւ պատանեկան ճամբարների ու բանակումների կազմակերպումը:

Այս տարի ՀՅԴ պատանեկան ճամբարներն անց են կացվել Մարտակերտի շրջանի Վանք գյուղում, Ասկերան եւ Ստեփանակերտ քաղաքներում: Ճամբարները կյանքի են կոչվել ՀՅԴ ԱՄՆ Արեւելյան եւ Արեւմտյան, ինչպես նաեւ ՀՅԴ Ֆրանսիայի «Նոր Սերունդ» երիտասարդական միությունների օժանդակությամբ:

Դաշնակցական երիտասարդները միշտ սպասված են Վանքում: Վանքում կազմակերպվող ճամբարն արդեն թվով 3-րդն է: Այս անգամ այն կյանքի է կոչվել ՀՅԴ ԱՄՆ Արեւելյան շրջանի, իսկ նախորդ 2 ճամբարները ՀՅԴ Լիբանանի երիտասարդական միության օժանդակությամբ:

Այս տարի ճամբարին մասնակցել են գյուղի 12-16 տարեկան շուրջ 30 պատանիներ: Նրանք բոլորն էլ յուրահատուկ էին իրենց տեսակով, եւ մեզ համար հաճելի էր տեսնել նրանց խանդավառությունը, նրանց չարաճճիությունները: Մենք փորձում էինք նրանց համար ուրախ ու զվարթ, ինչպես նաեւ օգտաշատ հանգիստ կազմակերպել: Ճամբարի ընթացքում մասնակիցները առիթ են ունեցել լսել դասախոսություններ մեր հայդուկների, նրանց սխրագործությունների մասին, սովորել ազգային երգեր ու պարեր, իրար հետ սպորտային ու ինտելեկտուալ մրցաշարեր անցկացրել:

Հաջորդ ճամբարը կյանքի է կոչվել ՀՅԴ ԱՄՆ Արեւմտյան շրջանի Հայ երիտասարդաց Դաշնակցության օժանդակությամբ՝ Ստեփանակերտի Աշոտ Ղուլյանի անվան հ.2 դպրոցում: Ճամբարին մասնակցել են 12-16 տարեկան շուրջ 170 պատանիներ: Ճամբարը տեւել է 10 օր, որոնք մեր կարծիքով անմոռանալի են դարձել ե՛ւ սփյուռքահայ մեր ընկերների, ե՛ւ ճամբարի մասնակից պատանիների համար: Ճամբարականների առօրյան հագեցած էր խաղերով, դասախոսություններով, երգերով ու պարերով, իսկ ավարտին պատանիները հանդես են եկել հաշվետու միջոցառմամբ՝ իրենց ծնողներին եւ հյուրերին ներկայացնելով 2 շաբաթների ընթացքում իրենց սովորածն ու յուրացրածը:

Հաջորդ ճամբարը կյանքի է կոչվել ՀՅԴ Ֆրանսիայի «Նոր սերունդ» երիտասարդական միության օժանդակությամբ: Ճամբարները կազմակերպվել են Ստեփանակերտի Ս. Սախարովի անվան հ.8 եւ Ասկերանի Է. Բարսեղյանի անվան միջնակարգ դպրոցներում: Ասկերանում ճամբարին մասնակցել են 150, իսկ Ստեփանակերտում շուրջ 250 պատանիներ: Ճամբարի ընթացքի եւ ճամբարից ստացած տպավորությունների մասին զրուցել ենք ՀՅԴ Ֆրանսիայի «Նոր սերունդ» երիտասարդական միության անդամ, ճամբարների ընդհանուր պատասխանատու Նիկոլաս Ավետիսյանի հետ:

Նիկոլաս Ավետիսյանը նշեց, որ ճամբարներն իրենց առօրյայով նմանվել են ՀՅԴ պատանեկան մյուս ճամբարներին հագեցած դասախոսություններով, խաղերով, երգերով ու պարերով:

«Մենք փորձում էինք պատանիների մեջ սերմանել հայրենասիրություն, ներկայացնել հայոց պատմության հերոսական էջերից, որպեսզի ոգեւորենք նրանց»,- ասել է Ն. Ավետիսյանը:

Խոսելով Արցախից եւ ճամբարից ստացած տպավորությունների մասին՝ նա նշեց, որ շատ ուրախ են, որ մեծ թվով պատանիներ են եկել ճամբար՝ նախորդ տարվա համեմատ:

«Պատանիները մեզ էին ուժ տալիս, մենք՝ պատանիներին, ու երկու շաբաթ նրանց հետ լավ ժամանակ անցկացնելուց հետո անգամ շարունակում ենք նրանց հետ կապ պահպանել»,- ասել է Ն. Ավետիսյանը:

Նիկոլասը նաեւ տեղեկացրեց, որ «Երկիր» ծրագրի նոր մասնակիցները, ովքեր առաջին անգամ էին Արցախ եկել, բավականին տպավորված են վերադարձել, եւ չնայած առկա դժվարություններին՝ երեխաների հետ աշխատանքը ոգեւորել է, եւ նրանք պատրաստակամություն են հայտնել հետագայում եւս գալ:

Խոսելով ՀՅԴ Ֆրանսիայի «Նոր Սերունդ» երիտասարդական միության ծրագրերի մասին՝ Նիկոլասը նշեց, որ բացի ճամբարի ծրագրերից, անցած տարի ձմռանը ամանորյա ուրախ ծրագրեր են անցկացրել Սյունիքում եւ Արցախում, իսկ այս տարի, երբ արցախում գազի խնդիր կար, 650 գազի տարաներ են ուղարկել Արցախ, որոնք բաժանվել են ըստ կարիքի:

Ճամբարներից զատ, ՀՅԴ Արցախի երիտասարդական միության համար կարեւորագույն ծրագրերից էր նաեւ ՀՅԴ համաարցախյան 4-րդ պատանեկան բանակումի կազմակերպումը, որը տեղի է ունեցել օգոստոսի 15-20-ը Ստեփանակերտում: Բանակումին, որը նախատեսված էր 12-17 տարեկան դաշնակցական պատանիների համար, մասնակցել են շուրջ 45 պատանիներ:

Բանակումի բացման հանդիսավոր արարողությանը ներկա էին ՀՅԴ Արցախի ԿԿ ներկայացուցիչ Ա. Մոսիյանն ու ԿԿ անդամները, ԱՀ ԱԺ «ՀՅ Դաշնակցություն» խմբակցության պատգամավոր Վահրամ Բալայանը, ԱՀ ԿԳՄՍ փոխնախարար Լեռնիկ Հովհաննիսյանը, ԱՀ ԿԳՄՍ նախարարության արտադպրոցական ծրագրերի բաժնի պետ Արմեն Պետրոսյանը, ԱՀ ԿԳՄՍ նախարարի օգնական Մելանյա Բալայանը:

ՀՅԴ համաարցախյան 4-րդ պատանեկան բանակումի մասնակիցները հնարավորություն են ունեցել մասնակցելու կրակային պատրաստության,առաջին բուժօգնության, ալպինիզմի դասընթացների, իսկ ԱՀ ԱԻՆ մասնագետների հետ՝ ծանոթանալ նաեւ տարբեր պայթուցիկ զինատեսակների, ունենալ արշավներ դեպի Հակոբավանք եւ Խաչեն գետ, այցելել Ստեփանակերտի եղբայրական հուշահամալիր, 44-օրյա պատերազմի զոհերի եւ ԱՀ առաջին նախագահ, դաշնակցական Արթուր Մկրտչյանի շիրիմներին: Պատանիները Ստեփանակերտի մարզադաշտում իրենց ուժերն են փորձել ֆուտբոլի եւ վոլեյբոլի առաջնություններում, հյուրընկալել եւ զրուցել են ՀՅԴ Բյուրոյի անդամ Դավիթ Իշխանյանի, ՀՅԴ Արցախի ԿԿ անդամներ Ժիրայր Շահիջանյանի, Միեր Առաքելյանի, Ալյոնա Գրիգորյանի եւ վաստակաշատ կուսակցական ընկեր Մուրատ Թոփալյանի հետ: Մասնակիցները նաեւ առիթ են ունեցել լսել դասախոսություններ քարտեզագիտության եւ դաստիարակչական թեմաներով, ինչպես նաեւ հոգեւոր զրույց Տեր Հովհաննես քահանա Հովհաննիսյանի հետ:

Պատանիների օրակարգում տեղ են գտել նաեւ ազգային երգ ու պարերի ուսուցումը, ժամանցային, սպորտային, ինտելեկտուալ խաղերը, մարզամշակութային, սպորտային մրցաշարերը:

Բացի այն, որ բանակումի ընթացքում փորձել ենք խթանել պատանիների գաղափարական, մտային եւ ֆիզիկական զարգացումը, նաեւ նրանց ենք տվել ազգային եւ քաղաքացիական դաստիարակություն ու կրթություն, խրախուսել առողջ ապրելակերպը եւ պատրաստել հայապահպանման վսեմ գաղափարներով տոգորված, արի եւ բարձր նկարագրի տեր անհատներ, նրանց մեջ արմատացրել հայրենասիրական եւ ընկերական ոգին, խորացրել կարգապահության եւ պարտաճանաչության գիտակցումը:

Վահագն ԽԱՉԱՏՐՅԱՆ

Եղցահող. առաջնագծում հայտնված բնակավայր

2022թ. սեպտեմբերի 30-ից հետո, երբ թշնամուն հանձնվեց Աղավնոն, Ներքին Սուսը, Բերձոր քաղաքն ու Արցախը Հայաստանին կապող ճանապարհի մի մասը, նոր գծված սահմանի մի կողմում, Մեծ Շենի դեմ դիմաց բլուրների վրա ծվարած մնաց Շուշիի շրջանի՝ մեր տիրապետության տակ մնացած Եղցահող գյուղը: Եղցահող հասնելու համար պետք է Ստեփանակերտից 7-8 դիրք: Ընդհանրապես, նույնիսկ Հայաստանում կատարված ռազմական գործողությունների ժամանակ գյուղում խուճապային տրամադրություններ չեն նկատվել: Իհարկե, անհանգստություն միշտ էլ կա, սակայն կյանքը համայնքում շարունակվել է բնականոն հունով: Դպրոցը գործում է, համայնքում շարունակվում են առանձնատների վերանորոգման աշխատանքները, կապիտալ վերանորոգվում է նաեւ համայնքապետարանի շենքը, որն ավարտելուց հետո կսկսվի նաեւ մշակույթի տան վերանորոգման աշխատանքները: Գյուղում կատարվում է նաեւ ներքին ցանցի եւ ջրամբարի վերանորոգման աշխատանքներ:

Գորիս մայրուղու նոր կառուցված ճանապարհի՝ Մեծ Շեն տանող խաչմերուկից անցնել 5 կմ, իսկ ճանապարհին տեղակայված խաղաղապահներն էլ հուշում են, թե որտեղից պետք է թեքվել դեպի Եղծցահող: Եղցահող «Ապառաժ»-ի այցը համընկել էր սեպտեմբերի 13-ին Ադրբեջանի կողմից ՀՀ սահմաններում սանձազերծած ռազմական գործողությունների հետ, բայց սահմանապահ գյուղում, այնուամենայնիվ, խուճապային տրամադրություններ չկային եւ մարդիկ զբաղված էին իրենց առօրյա հոգսերով: Գյուղում հանդիպեցինք համայնքի ղեկավար Արտակ Հակոբյանին, ով ներկայացրեց գյուղում ստեղծված իրավիճակն ու կատարված աշխատանքները:

- Պարոն Հակոբյան, ինչպիսի՞ իրավիճակ է տիրում գյուղում, ինչպիսի՞ն է գյուղացիների տրամադրվածությունը:

- Ինչպես Արցախի այլ բնակավայրերում, արդեն նաեւ Հայաստանի Հանրապետության համայնքներում մարդկանց մոտ նկատվում է մտավախություն՝ կապված ստեղծված անորոշ կացության հետ, բայց, այնուամենայնիվ, մարդիկ ապրում են իրենց առօրյա հոգսերով, խնդիրներով, զվաղվում են անասնապահությամբ, մեղվաբուծությամբ, որն այս տարի բավականին բարձր բերքատվություն է արձանագրել համայնքում: Գյուղի բնակչության թիվը, 2020թ. պատերազմի նախորդող ցուցանիշների համեմատ, աճել է: Գյուղից տեղահանություն չի եղել, մարդիկ գյուղը չեն լքել անգամ պատերազմի թեժ օրերին. թե՛ կանայք, թե՛ երեխաները գյուղում են եղել: Պատերազմից հետո տեղահանված ընտանիքներից 6 ընտանիք՝ 1-ը Հադրութի շրջանի Արեւշատ, Մեկը Շուշիի շրջանի Քիրսավան եւ 4 ընտանիք Բերձոր համայնքներից բնակություն են հաստատել Եղցահողում:

- Ինչպիսի՞ կորուստներ է կրել համայնքը պատերազմի ընթացքում:

- Տարածքների առումով համայնքի վարչական տարածքի 65 տոկոսից ավելին անցել է թշնամու տիրապետության տակ, ինչը դժվարացրել է անասնապահությամբ զբաղվելը: Այս պահի դրությամբ, օգոստոսի 1-3-ն ընկած ժամանակահատվածում ադրբեջանական առաջխաղացումներով պայմանավորված՝ նրանց դիրքը մեր բնակելի հատվածից հեռու է ընդամենը 500-600 մ: Այս ընթացքում արդեն արձանագրվել է անասնագողության 6 դեպք եւ ձիերի՝ 4, որոնց մասին տեղեկացրել ենք մեր իշխանություններին: Իմ ունեցած տեղեկություններով՝ ձիերի պահով երեւի աշխատանքները դրական արդյունք կտան եւ հետ կվերադարձվեն:

- Իսկ նախքան առաջխաղացումը որքա՞ն հեռու էին տեղակայված թշնամու դիրքերը:

- Նախքան առաջխաղացումը նրանք գյուղից հեռու էին շուրջ 5 կմ: Այս դեպքերից հետո նրանք ավելացրել են 7-8 դիրք: Ընդհանրապես, նույնիսկ Հայաստանում կատարված ռազմական գործողությունների ժամանակ գյուղում խուճապային տրամադրություններ չեն նկատվել: Իհարկե, անհանգստություն միշտ էլ կա, սակայն կյանքը համայնքում շարունակվել է բնականոն հունով: Դպրոցը գործում է, համայնքում շարունակվում են առանձնատների վերանորոգման աշխատանքները, կապիտալ վերանորոգվում է նաեւ համայնքապետարանի շենքը, որն ավարտելուց հետո կսկսվի նաեւ մշակույթի տան վերանորոգման աշխատանքները: Գյուղում կատարվում է նաեւ ներքին ցանցի եւ ջրամբարի վերանորոգման աշխատանքներ:

- Առանձնատները տեղահանվածների համա՞ր է, թե՞ նաեւ տեղի բնակիչների:

- Հիմնականում տեղահանվածների համար է, բայց նշեմ, որ նախագահի հետ հանդիպումից հետո, համայնքում բնակելի տների 70 տոկոսը ենթարկվել է վերանորոգման: Նախագահը խոստացել է, որ այդ աշխատանքները պետք է կատարվեն 100 տոկոսով: Տեղահանվածներին բնակարաններ են հատկացվել համայնքի բնակարանային ազատ ֆոնդից:

- Խախտումներ լինո՞ւմ են թշնամու կողմից՝ նոր դիրքերում տեղակայվելուց հետո:

- Այս պահի դրությամբ, իրենց առաջխաղացումից հետո բացարձակապես ոչ մի կրակոց չի արձանագրվել: Միայն թե թուրքը չի փոխում իր ձեռագիրը՝ զբաղվում են գողությամբ: Անասնագողությունը նրանց մոտ միշտ էլ կար, դեռեւս մինչեւ Արցախյան առաջին պատերազմը, նրանց մոտ այդ զբաղմունքը հոբբիի էր վերածվել: Այդ ժամանակներում եւս անասնապահությամբ զբաղվելը մեր գյուղացիների համար խնդիր էր: Ամեն ինչ փոխվեց առաջին պատերազմում ունեցած հաղթանակից հետո. մեր գյուղացիներն արդեն ազատ կարողանում էին զբաղվել անասնապահությամբ, մինչեւ 2020 թ. պատերազմն ու դրա թողած հետեւանքները:

Այնուամենայնիվ, անասնապահության համար գյուղում ստեղծված ոչ բարվոք պայմանները չեն խանգարում գյուղացիներին զբաղվել այդ աշխատանքներով. վերջերս նկատվում է խոզերի, հավերի, խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակի աճ, իսկ քանի որ Բերդաձորի ենթաշրջանը նպաստավոր է մեղվաբուծության համար, գյուղում սկսել են շատ զբաղվել նաեւ մեղվաբուծությամբ:

- Այսօր ինչպե՞ս եք պատկերացնում Արցախի ապագան, մասնավորապես՝ Ձեր գյուղի համար ստեղծված նոր կացության պարագայում:

- Մեր գյուղի առումով պետք է նշեմ, որ մշտապես գտնվում ենք Արցախի իշխանությունների ուշադրության կենտրոնում, իսկ ինչ վերաբերվում է Արցախի ճակատագրին, ապա ես լավատես եմ, որովհետեւ այսքան կորուստներից հետո նորից ավելի վատ լինել չի կարող: Մեզ մնում է միայն համախմբվել, միասնական լինել եւ աշխատանքներ կատարել դիվանագիտական դաշտում. դիվանագիտությունը մեր ռուս բարեկամների հետ պետք է տարվի, քանի որ խաղաղությունն այսօր նրանք են պաշտպանում, որտեղ սակայն ինչ-ինչ պատճառներով թերացումներ եմ նկատում:

Գյուղում առաջինը մեզ հանդիպեցին դպրոցի բակում խաղացող երեխաները: Ինչպես գյուղը, այնպես էլ գործող գյուղի դպրոցը մեծ ուշադրության են արժանանում: Այս մասին «Ապառաժ»-ի հետ զրույցում նշել է դպրոցի տնօրեն Լենա Իշխանյանը:

- Տիկին Իշխանյան, ի՞նչ խնդիրներ կան այսօր դպրոցում:

- Արդեն 5 տարի է՝ դպրոցում տնօրեն եմ աշխատում: Փառք Աստծո, դպրոցը մեծ ուշադրության կենտրոնում է եւ առանձնապես խնդիրներ չկան: Այս պահի դրությամբ՝ միակ խնդիրը գազի բացակայության խնդիրն է: Քանի որ դպրոցը գազիֆիկացված է, իսկ ճանապարհի փոփոխությունից հետո գյուղը զրկվել է գազամատակարարումից, ուստի գազամատակարարման բացակայությունը խնդիր է ստեղծում դպրոցի համար: Պատկան մարմինները խոստացել են, որ շուտով կլուծվի հարցը: Այժմ աշխատանքներ են տարվում գազամատակարարման հին գիծը նորոգելու ուղղությամբ:

- Որքա՞ն է դպրոցում սովորող աշակերտների թիվը:

- Դպրոցում սովորում է 15 աշակերտ: Պատերազմից առաջ 22 աշակերտ ունեինք, բայց պատերազմից հետո 7 աշակերտ տեղափոխվել եւ մնացել են Հայաստանի Հանրապետությունում:

- Դպրոցում կա՞ն ուսուցիչների ազատ հաստիքներ:

- Դպրոցն ապահովված է մասնագետներով, ընդորում՝ բոլորը տեղացի են. դրսից հրավիրյալ մասնագետներ չունենք:

- Այս իրավիճակի հետ կապված՝ ինչպիսի՞ն են տրամադրությունները դպրոցում:

- Ներքին մտավախություն, անհանգստություն կա, բայց խուճապ չկա. այն չի խոչընդոտում մեր դպրոցի բնականոն աշխատանքներին:

- Իսկ գյուղի մոտակա դիրքերը, որոնք անգամ անզեն աչքով են տեսանելի դպրոցականների համար, չի՞ ազդում դպրոցի աշակերտների հոգեբանության վրա:

- Ոչ, նույնիսկ երբ փորձում եմ երեխաների տրամադրությունները ստուգել, նրանք ասում են. «Ո՛չ, ընկե՛ր Իշխանյան, ինչի՞ց վախենամ, նրանք ո՞վ են, որ մենք նրանցից վախենանք»: Դե երեխաներ են, շատ հաճախ գիտակցաբար կամ անգիտակցաբար են մոտենում հարցին, բայց նրանց մոտ ոգեւորություն կա. նույնիսկ պատերազմի օրերին մեր երեխաները ընկճված չէին:

- Որպե՞ս մանկավարժ՝ ո՞րն եք համարում Ձեր առաքելությունը:

- Այս պահին իմ առաքելությունը համարում եմ մեր գյուղում ապրելը: Այդպես թշնամուն ապացուցում ենք, որ նրանք մեզանից ուժեղ չեն:

Վահագն ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հայաստան եւ Ադրբեջան

Մաս 1

Ազգային-ազատագրական պայքարի գործիչ, 1-ին Հանրապետության Ռազմական եւ Ներքին գործերի նախարար, ՀՅԴ Բյուրոյի երկարամյա անդամ Ռուբեն Տեր-Մինասյանի հոդվածը «Հայաստան եւ Ադրբեջան» վերնագրով, որը հրատարակվել է «Հայրենիք» ամսագրում 1927 թվականին եւ այժմեական է նաեւ մեր օրերում:

Ներկայացնելով Ղարաբաղյան շարժմանը նախորդող հայկական քաղաքական հոսանքների պատմությունը՝ հրապարակում ենք Ռուբեն Տեր-Մինասյանի (1882-1951) «Հայաստանը եւ Ադրբեջանը» վերլուծության առաջին մասը: Հատկապես հետաքրքրական է հեղինակի ուշադրությունը ոչ միայն այնպիսի փոփոխական գործոններին, ինչպիսիք են այս կամ այն երկրի քաղաքական սահմանները, ազգագրական կազմը եւ այլն, այլեւ անփոփոխ ու հիմնարար իրողություններին, ինչպիսիք են հատկապես աշխարհագրական տվյալները, ընդ որում՝ ոչ միայն իրենք իրենցով, այլեւ՝ պատմության, անվտանգության եւ տնտեսության հետ իրենց սերտ կապի մեջ: Հենց սա է, որ հատկապես կարեւոր արժեք է տալիս նաեւ «Հայաստան եւ Ադրբեջան» հոդվածին, եւ թույլ է տալիս Ռուբենին հարցը քննելով կայուն եւ հարատեւ գործոնների լույսի ներքո՝ բացահայտել խնդրի խորքը՝ անկախ իրավիճակի փոփոխություններից: Ղարաբաղյան շարժման համատեքստում դիտարկելիս հոդվածն ինչ-որ տեղ մարգարեական կանխատեսումն էր Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ առճակատման անխուսափելիության, նաեւ՝ հեղինակի կողմից տրված մեթոդով հնարավոր է վերհանել խնդրի լուծման այն բանալին, որը հիմնված կլինի իրական, հիմնարար գործոնների, այլ ոչ թե մակերեսային «խաղաղասիրության» վրա:

Ադրբեջանը նոր երկիր մըն է, հազիւ տասնեակ տարին բոլորած: Նման երկիր եւ ժողովուրդ՝ «ադրբեջանցի» անունով, բնաւ գոյութիւն չէ ունեցած պատմութեան ընթացքին: Եղած է եւ կայ պարսից Ատրպատական, որուն անունը սեփականացուցած են Ուտիք եւ Աղուանից երկիրներու այժմեան բնակիչները:

Պատահականութիւն պէտք չէ նկատել, որ հին Ուտեաց եւ Աղուանից երկիրները, որ կ'ընդգրկէին ներկայ Պաքուի նահանգը եւ Գանձակի դաշտային մասերը այսօր կը կոչուին Ադրբեջան: Այս թիւրիմացութեան, տգիտութեան հետեւանք չէ, այլ մտածուած ձեւուած քաղաքական որոշ ձգտումներու: Ադրբեջան խօսքը ըստ էութեան անուն չէ միայն, այլ բնորոշումը քաղաքական ծրագրի մը:

Ադրբեջան ըսելով պէտք է հասկնալ, որ պիտի ըլլան երկու Ադրբեջաններ՝ պարսկական եւ ռուսական, եւ որ եթէ այսօր պատահաբար կեդրոնը Պաքուն է, վաղը պիտի ըլլայ բուն հայրենիքի մէջ՝ Թաւրիզը: Ադրբեջանցի ըսելով պէտք է հասկնալ, որ մենք այլեւս միայն իսլամ, չիտ չենք եւ ոչ ալ պարսիկ, տարբեր ենք բոլորէն եւ միայն նման ենք թուրքին, որ մենք թուրք ենք եւ կը ստեղծենք նոր Թուրքիա մը՝ Թուրքիոյ կողքին:

Դեռ եւս ադրբեջանեան մտքի մէջ բիւրեղացած չէ այն գաղափարը, թէ իրօք իրենք ինչացո՞ւ են, «ադրբեջանցի» թէ «ադրբեջանցի թո՞ւրք»: Արդեօ՞ք իրենց հեռանկարն է ստեղծել «միացեալ Ադրբեջան» միայն, թէ «Արեւելյան Թուրքիա», իբր մաս Թուրքիոյ: Ահա այս երկընտրանքի, տատանման մէջ է ներկայ ադրբեջանեան միտքը: Եթէ մուսավաթ, իթիսթ ուղղութիւնները կը տանին ադրբեջանեան միտքը դէպի միացեալ Թուրքիոյ գաղափարը, բայց եւ կան մասնակի հոսանքներ, որ իրենք զիրենք կը զգան ադրբեջանցի միայն, կովկասցի միայն, եւ իբր այդպիսին կը ձգտին իրենց ազգային վերազարթնման:

Մտքերու այս շփոթը եւ երբեմն հակամարտութիւնները ունին իրենց պատճառները, որ եթէ մէկ կողմէ կը թելադրուի տակտիկական տուեալներէ, միւս կողմէ ալ կը բղխի ադրբեջանցի ժողովրդի էթնօգրաֆիէն, հէտէրօժեն կազմուածքէն եւ անոր կուլտուրական, հոգեկան տարբեր տուեալներէն:

Այս խնդրին պիտի անդրադառնանքգ բայց այստեղ այսքանը ասենք, որ այսպէս թէ այնպէս Հայաստանէն հիւսիս արեւելք կը կազմակերպուի ժողովուրդ մը, որ նպատակ ունի միացեալ Ադրբեջան ստեղծելու եւ ինքզինքը կը համարէ մեծ մասով «ադրբեջանցի թուրք», իսկ փոքր մասն ալ ադրբեջանցի:

* * *

«Ադրբեջան» կոչման մասին այս ծանօթութիւնը տալէ յետոյ տեսնենք, թէ ո՞ւր կը գտնուի այս երկիրը:

Մեծ եւ փոքր Կովկասի արեւելեան երկու ծայրերուն միջեւ, այսինքն՝ Դաղստանի եւ Ղարաբաղի միջեւ կը տարածուի ընդարձակ հարթավայր մը, մոտ 60.000 քառ. քիլօմէթր: Այս հարթավայրի մէջէն կը հոսի Կուր գետը եւ Արաքսի հետ միանալով կ'երթայ կը թափի Կասպից ծովը: Կուրի երկու ափունքը սահման ունենալով հարաւէն Արաքսը, հիւսիսէն կովկասեան շղթան եւ արեւելքէն Կասպից ծովը՝ կը կոչուի այսօր Ադրբեջան:

Այս տարածութեան վրայ երբեմն կ'ապրէին երկու ժողովուրդներ, Կուրի ձախ ափին Ուտիք, իսկ աջ ափին գլխաւորապէս Աղուանք. այս երկու ազգերու անունով ալ կը ճանաչուէր այս երկիրը հին աշխարհին մէջ իբր երկու պետութիւն, իբր երկու ժողովուրդ: Այդպէս էր մինչեւ 10-11-րդ դարերը: Այս երկու երկիրներն ալ իրենց ժողովուրդներով առաջները մեծապէս ազդուեր են հայ քաղաքակրթութենէն, դպրութենէն. անոնք եղեր են կամ հայոց իշխանութեան ներքեւ, կամ անոր վասալը, կամ անոր դաշնակիցը: Գոնէ այս կ'ապացուցանեն մեր հին պայմանագիրները:

Կասկածելու տեղիք չկայ պատմական այդ տուեալներու վրայ, որովհետեւ դեռ երէկ էր, որ գոյութիւն ունէր Աղուանից հայոց Լուսաւորչական եպիսկոպոսութիւնը՝ կեդրոն ունենալով Ղարաբաղը, թէեւ աղուան ժողովուրդ չկար այլեւս: Իսկ այսօր մազապուրծ-ազատած Ուտիացիք, որ ծուարած են Կովկասի փէշերուն տակ Նիժի մէջ, Վարդաշէնի մէջ եւ այլուր, կը զգան թէ որքան Ուտիք են, նոյնքան ալ հայ են, Հայաստանցի, եւ ոչ ոք այնքան լաւ հայ է, որքան Կուկունեան մը, զօրգ Սիլիկեան մը, որոնք ծագումով Ուտիք, բայց ազգութեամբ հայ եւ Հայաստանցի են:



Աւանդութիւններու, հոգեբանութեան, զբաղմունքներու նոյնութիւնը կ'ապացուցանէ մեր նախորդներու ազդեցութեան եւ ուժի չափը, ինչպէս նաեւ քաղաքական ուղղութիւնը, որուն փշրանքներէն մենք պէտք է օգտուինք:

Անցեալ պատմութեան վերյիշումը արժէքաւոր չէ, եթէ ան նպատակ ունի միայն վերյիշել հետաքրքրութեան բաւարարելու համար. այդ պէտք է թողուլ պատմագիրներուն, հնագէտներուն: Պատմութիւնը արժէքաւոր է գիտնալը կառուցանելու համար ներկայ եւ ապագայ կեանքը:

Եթէ պատմութիւնը մեզմով չի սկսիր եւ ոչ ալ մեզմով պիտի վերջանայ, եւ եթէ մեր կեանքը տրամաբանական շարունակութիւնն է անցեալին, ապա մեր եւ հին Ադրբեջանի (Աղուանից եւ Ուտեաց) պատմութենէն անխուսափելիօրէն պիտի եզրակացնենք.

ա) Որ թէեւ հայերը աւելի հզօր են եղած, քան փոքրիկ Ուտեաց եւ Աղուանից ժողովուրդները, եւ իրենք զիրենք կը կոչէին «հանուրց հիւսիսականաց վեհագոյն», բայց թէ այդ հզօր ժողովուրդը բնաւ չէ ձգտած իր գաւառները դարձնելու Աղուանքը եւ Ուտիքը.

բ) Որ Աղուանք եւ Ուտիք նկատուեր են մեր նախորդներու կողմէ իբր անհրաժեշտ պայման իրենց երկրի ապահովութեան ու կենսունակութեան համար, եւ չեն զլացած իրենց այրուձիով հասնիլ մինչեւ Ճորա պահակ՝ պաշտպանելու համար ինչպէս Աղուանքն ու Ուտիքը, նոյնպէս Հայաստանը՝ քուշանաց, հոներու, սկիֆներու եւ այլոց արշաւանքներէն.

գ) Որ հայերը, Ուտիք եւ Աղուանները, գիտակցաբար թէ հարկադրուած, գտեր են համակեցութեան այնպիսի անհրաժեշտ պայմաններ, որ բնաւ իրարու դէմ չեն եղած եւ, ընդհակառակը, դժուարին պարագաներու մէջ եղեր են միշտ իրարու կողքին:

Այս երեք ժողովուրդներու համակեցութիւնը այնքան է սերտեղած, որ դժուար էր տարբերել հայը աղուանէն, ինչպէս այսօր դժուար է ջոկել ուտիքը հայէն:

Եթէ հին պատմութիւնը քրքրելու ըլլանք, ուզենք չուզենք այս երեք հիմնական գծերը պիտի նշմարենք մեր եւ մեր հիւսիսի ժողովուրդներու փոխյարաբերութեանց մէջ:

* * *

Թէ որ հին պատմութիւնը մեզ այդ դասը կուտայ, հարց առաջ կուգայ՝ ինչո՞ւ այդպէս էր երէկ եւ ինչո՞ւ այդպէս չէ այսօր: Նոր Աղուանից եւ նոր Ուտեաց աշխարհներու հետ, որ միասին կը կազմեն Ադրբեջանը, բարեացակամ յարաբերութիւն իսկ գոյութիւն չունի այսօր:

Գուցէ նոր հայերս անարժան ժառանգներն ենք մեր նախնիներու, կարճատես ու խռովարար ենք. գուցէ ընդհակառակը Աղուանից եւ Ուտեաց նոր բնակիչները՝ ադրբեջանցիք, ագահ են, կարճատես ու խռովարար: Գուցէ երկու կողմերն ալ ունին իրենց թերութիւնները, բայց անցեալի ներդաշնակութիւնը եւ ներկայի արիւնալի պայքարը հետեւանք են նոր տուեալներու, հակամարտ շահերու եւ ձգտումներու:

Որպէսզի լաւ ըմբռնենք ներկայի եւ անցեալի հակասութիւնը, պէտք է պարզել բուն պատճառները այդ ներդաշնակ կենակցութեան հին հայերու, աղուաններու եւ ուտեաց միջեւ:

Պատմագիրները որոշակի չեն յայտներ մեզ այդ պատճառները, բայց անոնց ըսածներէն դժուար չէ եզրակացնել, որ այդ բնական դաշնակցութիւնը կը թելադրուէր երկու հիմնական դրդապատճառներէ, առաջին՝ քաղաքական եւ երկրորդ՝ տնտեսական:

Աղուանք եւ Ուտիք, փոքրիկ ժողովուրդներ ըլլալով, չէին ձգտեր հարուածելու Հայաստանը հիւսիսէն, չէին բաղձար տիրապետելու հայոց երկիրներուն: Անոնց երկիրները հարուստ էին եւ ընդարձակ այդ փոքր ժողովուրդներուն համար: Անոնք պաշտպանուած էին հիւսիսէն կովկասեան լեռներով, եւ եթէ հարաւէն, Փոքր Կովկասի հայոց Արցախ եւ Սիւնեաց երկիրներէն վտանգ չսպառնար անոնց, անոնք կ'ապրէին ինքնաբաւ եւ երջանիկ՝ Կուրի հովտին մէջ: Աղուանք եւ Ուտիք, ուզէին թէ չուզէին, հաշուի առնելով իրենց ուժն ու շահերը, պիտի ջանային ապահովել Հայաստանի դաշնակցութիւնը, պայմանով որ Հայաստան ազատ թողուր զիրենք եւ պաշտպան կանգնէր այդ ազատութեան:

Հայաստան ալ, միւս կողմէն, օգուտ ունէր ատոնց ազատութենէն, անոնց գոյութիւնը կը վերացնէր մեծ չափով այն վտանգները, որ կրնային գալ կովկասեան շղթայի հիւսիսի ժողովուրդներէն: Աղուանք եւ Ուտիք մեր առաջապահները, բուֆէռներն էին հիւսիսի դեմ:

Անխելք պիտի ըլլային մեր նախնիքը, եթէ չյարգէին Աղուանից եւ Ուտեաց ազատութիւնը, այս պատճառով ալ մեր զինուորականները, գիտնականները կամ կրօնաւորներն իրենց արիւնն ու եռանդը չեն զլացած հին Ադրբեջանի ազատութեան պաշտպանութեան համար:

Կար նաեւ տնտեսականը: Մեր պատմագիրները կը յիշատակեն, թէ հին Ադրբեջանը ձմեռանոց էր Արշակունեաց համար, եւ Հայաստանն ալ ամառանոց էր եւ է մինչեւ այժմ Աղուանից համար:

Երբ երկու տարբեր երկիրներ, որոնց տնտեսականի հիմքը կը կազմեն խաշնարածութիւնն ու երկրագործութիւնը, իրարու կը ծառայեն իբր ձմեռանոց ու ամառանոց, բնականօրէն այդ երկիրներէն մին կամ պիտի ձուլուի միւսին մէջ եւ կամ երկուքը միասին դաշնակցելով պիտի ապրին ու կենակցին՝ ինչպէս լիքէն ու սունկը մամուռի մէջ: Հայերն ու Աղուանք, դաշնակցելով, կ'ապրէին իրարու հետ, մին լեռներու մէջ, միւսը դաշտերու մէջ:

Ահա այս պատճառներով էր, որ Հայաստան եւ այս երկու ժողովուրդները երկար դարեր ներդաշնակ կ'ապրէին: Հայաստան, առանց հասնելու մեծ Կովկասի շղթային, Աղուանից եւ Ուտեաց ժողովուրդներու միջոցով փաստօրէն յենուած էր կովկասեան շղթային: Եւ մասամբ այս պատճառով է, որ մեր փոքր ժողովուրդը, ինքզինքը ապահով զգալով հիւսիսէն, կը կարողանար դիմադրել պարսից, հռոմէացւոց, արաբաց եւ բիւզանդացւոց:

Հայաստանը ողնաշար ունէր փոքրիկ Կովկասը (Ղարաբաղը) եւ կռնակ ունէր Աղուանքը եւ Ուտիքը:

Ասոնք Հայաստանի հզորութեան ազդակներն էին:

/Շարունակելի/

«Ապառաժ» երկշաբաթաթերթ
Ստեփանակերտ, Կնունյանցների 17,
հեռ. +374 97 38 43, E-mail: aparajtert@gmail.com
Կայքէջ՝ www.aparaj.am

Նյութերի համար պատասխանատու են հեղինակները: Թերթը կարող է տպագրել նաեւ նյութեր, որոնցում արծարծված տեսակետները չի կիսում:
Տպագրվում է Ստեփանակերտի «ԴԻԶԱԿ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ում:
Գրանցման վկայական՝ 04: Տպաքանակը՝ 700: Գինը՝ 100 դրամ:

**Խմբագիր
Ա. Պուլուզյան**